

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԱՂԱՆՈՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՆԻՍՏԻ ՀՐԱԻՐԵՅ

Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ սուրիական բանակի եւ գինետալ ուժերու մէջ ապահովական մարմիններու ղեկավարներու հետ նիստ մը գումարեց:

Նիստին ներկայ էին նաեւ ազգային անվտանգութեան գրասենեակի նախագահը եւ Սուրիոյ Նախագահութեան ընդհ. քարտուղարութեան ապահովական հարցերու խորհրդատուն:

Նիստը կեդրոնացաւ ապահովական մարմիններու աշխատանքին հետեւանքներուն վրայ եւ շեշտեց անոնց գործակցութեան կարեւորութիւնը, ինչ որ ապահովական ուժերու ահաբեկչութեան դէմ պայքարի տարողութիւնը պիտի ընդլայնէ:

Նախագահ Ասատ շեշտեց ապահովական մարմիններուն ահաբեկչութեան դէմ պայքարելու դերը, յայտնելով, որ քաղաքացին եւ անոր անվտանգութիւնը ապահովական մարմիններուն բարձրագոյն մարտահրաւերն են:



## ՀՈԳԵՀԱՆՊՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱԽԿՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ՆԱԽԿԻՆ ԱՍՏՏՆՈՐԳ ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐԸ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԲԱՌԱՍՈՒՆԵՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 28 Յունուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յետ Սուրբ եւ Անմահ Պատարագին, Յոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ, Բերիոյ Յայոց Թեմի նախկին Առաջնորդ Յոգեւելոյ Տ. Սուրեն Արք. Գաթարոյեանի վախճանման քառասունքին առիթով:



Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի հանդիսապետութեամբ, Յալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Յոգշ. Տ. Արմեն Արք. Գալաճեան:

Շար. 12 ➤

## ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ 32 ՏԱՐԵՎԱՆ Է

28 Յունուարին, Յայաստանի Յանրապետութիւնը կը յիշատակէ Բանակի օրը, 33 Չինուած Ուժերու 32-րդ տարեդարձը: 1992-ի այս օրը ընդունուեցաւ 33 Պաշտպանութեան Նախարարութեան մասին



իրամանագիրը, 33 տօնացոյցին մէջ 28 Յունուարը ներառուեցաւ 2001 թուականի 6 Յունուարին, այսպիսով 33 Բանակի օրը Յայաստանի մէջ կը յիշատակուի արդէն 20-րդ անգամ:

28 Յունուարը ոչ-աշխատանքային սահմանուեցաւ 2002-էն ի վեր:

Մինչեւ 33 Չինուած Ուժերու ձեւաւորումը, Արցախեան ճակատին վրայ Ատրպէյճանի սանձազերծած յարձակումին դէմ կը ղնէին շուրջ 80 կամաւորական ջոկատներ, անոնք կը պաշտպանէին նաեւ Յայաստանի սահմանները:

Յայկական բանակի ստեղծման ու կայացման փուլերը գուցահեռաբար ընթացան 33 պետականութեան կազմաւորման ու ամրապնդման հետ: Բանակը այսօր ալ, մեծաթիւ փորձագէտներու համոզմամբ, կը համարուի Յայաստանի ամենակայացած պետական կառոյցը:

33 Ազգային բանակին համար ամենադժուարին, բայցեւ հերոսական փուլը Յունիս 1992-էն - Մայիս 1994-ի ժամանակահատուածն էր, երբ Յայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւնները

թեւ միացում չյայտարարած, բայց Ատրպէյճանի հետ փաստացի պատերազմի մէջ էին: Բանակը ոչ միայն ստեղծուեցաւ ու կայացաւ, այլեւ թրծուելով Արցախեան պատերազմի կրակներուն մէջ, պաշտպանեց ու ազատագրեց պատմական հայրենիքին զգալի մասը, հակառակորդին հարկադրելով գինադադար հայցել, ապա երեք կողմերու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ ստորագրուեցաւ Մայիս 1994-ին՝ Պիշքեքի մէջ, եւ քանի մը օր անց՝ 12 Մայիսին, ուժի մէջ մտաւ:

Այնուհետեւ, բոլոր այս տարիներուն Ատրպէյճան գրեթէ ամէնօրեայ դրութեամբ խախտած է հրադադարը, պարբերաբար ներթափանցման փորձեր ձեռնարկած: Այդ շարքին մէջ կ'առանձնանան 2016 թուականի ապրիլեան ռազմական գործողութիւնները, որոնք առաւելապէս ծանօթ են Քառօրեայ պատերազմ անունով:

Այդ օրերուն Ատրպէյճանի լայնածաւալ յարձակումներուն դիմակայելու եւ հակառակորդին ետ շարտելու գործը ամբողջութեամբ իրականացուց Յայկական բանակը: Յայկական բնակավայրերու պաշտպանութեան այդ հերոսական օրերուն արագօրէն կազմաւորուած ու ճակատ մեկնած կամաւորական ջոկատները պարզապէս չհասան մասնակցիլ ռազմական գործողութիւններուն, բայց դարձան համագային համախմբուած Բանակի կողքին կանգնելու ամենատպաւորիչ վկայութիւնը:

Յայկական բանակը նաեւ կոփուած է պատերազմներու մէջ: Հակառակ երիտասարդ տարիքին, Յայաստանի Յանրապետութեան 2ի-

## ՀԱՍՈՒՏԱ ՍԱՂՂԱԳ ՀԱՆԴՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԻ ԻՐԱՆԵԱՆ ՊԱՏՈՒՐԱՎՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Սուրիոյ Խորհրդարանի նախագահ Յամմուտա Սապպաղ Իրանի ներքին գործոց նախարարի ոստիկանական եւ ապահովական հարցերու օգնական Մաճիտ Միր Ահմադիի եւ անոր ընկերակցող պատուիրակութեան հետ հանդիպում ունեցաւ:

Սապպաղ շեշտեց կողմերուն պատմական յարաբերութեան խորութիւնը, յատկապէս Սուրիոյ պատերազմի տարիներուն եւ ահաբեկչութեան դէմ պայքարի ընթացքին:

Սապպաղ յայտնեց, որ Սուրիա եւ Իրան ԱՄՆ-ի եւ Իսրայէլի կողմէ դաւադրական գործողութիւններու կ'ենթարկուին, սակայն անոնք կը շարունակեն դիմադրել անոնց: Ան դիտել տուաւ, որ Պաղեստինի դա-

տին աջակցելու հարցով Սուրիոյ եւ Իրանի կեցուածքը միասնական է:

Իր կարգին Իրանի ներքին գոր-



ծոց նախարարի օգնականը բարձրօրէն գնահատեց Սուրիոյ զօրակցութիւնը Իրանին՝ իրանեան իսլամական յեղափոխութեան սկիզբէն, շեշտելով երկու երկիրներուն տարբեր ոլորտներու մէջ գործակցութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը:

Նուած Ուժերը անցած են երեք պատերազմով: Արցախեան առաջին պատերազմին տարած յաղթանակէն ետք, հայ գինուորն ու կամաւորը Նոյն հերոսական սխրանքները գործեցին նաեւ Ապրիլ 2016-ին, երբ վերջ դրին Ատրպէյճանի սանձազերծած քառօրեայ ռազմական գործողութիւններուն:

27 Սեպտեմբեր 2020-էն մինչեւ 10 Նոյեմբեր Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ սանձազերծուած 44-օրեայ պատերազմի ընթացքին, ինչպէս նաեւ Սեպտեմբեր 2022-ին Ատրպէյճանի կողմէ 12-13 Սեպտեմ-

բերին Յայաստանի վրայ յարձակման ընթացքին՝ Չինուած Ուժերու ծառայողները անօրինակ սխրանքներ գործեցին՝ պաշտպանելով հայրենիքի սահմանները, չխնայելով սեփական կեանքը: Շուրջ երեք տասնամեակներու ընթացքին երեք պատերազմով անցած բանակի ուսերուն այժմ առաւել մեծ պատասխանատուութիւն դրուած է:

Յայոց բանակը եղած է՝ կը մնայ անառիկ սահմաններու՝ անվտանգութեան երաշխաւորը:

Շնորհաւոր տօնդ, Յայկական բանակ:

### Խմբագրական

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ՍՈՒՐԻԱՅԵՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՈՉ-ՅԱՒԱՍՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամերիկեան ուժեր ՏԱՅԵՆ-ի գիտել խմբաւորումները հարուածելու պատրուակով 2014-էն ի վեր ապօրինաբար կայք հաստատած են Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններ: Տարիներու ընթացքին, քրտական գործօնը օգտագործելով, այս ուժերը թալանեցին ու կը շարունակեն թալանել Սուրիոյ քարիւղը, նոյնը կատարեցին թրքական ուժերը՝ քրտական խմբաւորումներու դէմ պայքարելու պատրուակով:

Միացեալ Նահանգներ նաեւ «Կայսեր» պատիժը սահմանելով Սուրիոյ, ամէն ջանք ի գործ դրաւ տապալելու Սուրիոյ իշխանութիւնը, պարտադրելու սուրիական տագնապի լուծման իր տարբերակը:

Տարիներ ետք, սակայն, երեւան եկաւ, որ այս ուժերուն ներկայութիւնը պարզապէս անօրինութիւններու դուռ բացաւ երկրէն ներս, որոշ խմբաւորումներ տնտեսապէս ուժեղացան՝ փոխարէնը ծառայեցին թրքական եւ ամերիկեան ուժերուն, անտեսելով իրենց իսկ երկրի շահերը, հատուածական շահեր հետապնդելով պարզապէս:

Ժամանակը ցոյց տուաւ, սակայն, որ ամերիկեան եւ թրքական ուժերուն ներկայութեան վերջ տալով միայն կարելի է լուծել սուրիական տագնապը. տագնապ մը, որ ստացաւ ապահովական, ապա քաղաքական եւ տնտեսական բնոյթ, իսկ անոր լուծման ուշացումը սկսաւ անդրադարձ ունենալ նաեւ ապօրինի այս ուժերուն վրայ:

Վերջերս ՏերՉօրի շրջակայքը հաստատուած ամերիկեան ուժեր թիրախ դարձան հրթիռակոծումներու, ամերիկացի զինուորներ սպանուեցան, ինչ որ ամերիկեան ուժերուն ներկայութեան հետեւանքները նիւթականէն մարդկային վնասներու շրջածիր ուղղեց: Երեւոյթ մը, որ անհանգստացուց ամերիկեան կողմը ու ըստ կարգ մը լրատուամիջոցներու՝ քաղաքական խափն շրջանառութեան մէջ դրաւ Սուրիայէն դուրս գալու հաւանականութիւնը:

Նախորդ տարուան աւարտին եր՝ երբ ՄԱԿ-ի Սուրիոյ բանագնաց Կիր Պետրոսըն յայտնեց, որ Սուրիոյ տագնապին լուծումը կը պահանջէ սերտել ամերիկեան եւ թրքական ուժերուն դուրս բերումը սուրիական տարածքներէն, ինչպէս նաեւ Սուրիոյ պարտադրուած պատժամիջոցներու վերանայումը (Նովոստի, 10 Դեկտեմբեր 2023):

Վերջերս «Ֆորէն Փոլիսի» լրատուականը յայտնած է, որ «Աքսայի Ջրհեղէղ» գործողութիւնը եւ անոր ազդեցութիւնը տարածաշրջանին վրայ ամերիկայի նախագահ Պայտըրի վարչակարգը մղած է վերանայելու Միջին Արեւելքի մէջ Միացեալ Նահանգներու զինուորական ներկայութեան առաջնահերթութիւնները:

Աղբիւրին համաձայն, Պաշտպանութեան եւ Արտաքին Գործերու Նախարարութենէն ներս կը քննարկուի Սուրիայէն քաշուելու հաւանականութիւնը, սակայն վերջնական որոշում չէ գոյացած այս առումով:

Միւս կողմէ Սուրիոյ հարցով Ռուսիոյ նախագահի յատուկ ներկայացուցիչ Ալեքսանտր Լաւրենտեւ ռուսական ԹԱՍՍ լրատուամիջոցին հետ զրոյցի ընթացքին խօսած է թուրք-սուրիական յարաբերութիւններու կարգաւորման, ինչպէս նաեւ Սուրիոյ տարածքին օտարերկրեայ զինեալ ուժերու ներկայութեան մասին:

Ռուս պաշտօնեան մասնաւորապէս անդրադարձած է թրքական զինեալ ուժերուն եւ վերջիններուս կողմէ աջակցութիւն վայելող Սուրիոյ զինեալ խմբաւորումներու վերահսկողութեան տակ գտնուող սուրիական տարածքներուն եւ լուսարձակի տակ առած թրքական ուժերուն ապօրինաբար սուրիական տարածքներ գտնուած ըլլալու իրողութիւնը: Ան վերլիչեցուցած է որ Սուրիա - Թուրքիա յարաբերութիւնները կարելի չէ կարգաւորել մինչեւ թրքական ուժերուն դուրս գալը, իսկ վերջինիս գործնականացման ուշացումին հետեւանքով Ռուսիոյ միջնորդութեամբ սկսած կողմերու հանդիպումները չեն արդիւնաւորուած:

Տարածաշրջանին մէջ Պաղեստինեան դիմադրութեան գործողութիւնները, յատկապէս վերջերս ՄԱԿ-ի կողմէ Իսրայելը չարաբարացող յայտարարութիւնները, տարածաշրջանային ուժերու բախման լուրջ նախադրեալներ կը ստեղծեն, ինչ որ կրնայ Միացեալ Նահանգներն ու Թուրքիան մղել գէթ սուրիական ճակատին վրայ բախումներու թիրախ դառնալէ զգուշանալու:

Իրականութեան մէջ, սակայն, ցարդ գործնական ոչ մէկ քայլ երեւելի է վերոյիշեալ ապօրինի ուժերուն Սուրիայէն դուրս գալուն առումով: Միւս կողմէ այս ուժերուն Սուրիա մնալով բախումներու տարածքը կրնայ ընդլայնիլ եւ թիրախ դարձնել այս ուժերը եւս:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատին Սուրիոյ նահատակներու զաւակներուն ցուցաբերած օգնութիւններու ծիրէն ներս յայտարարուեցաւ, որ նախագահը պիտի հոգայ նաեւ նահատակներու, ֆիզիքական անկարողութիւն ունեցողներու, վիրաւորներու եւ անյայտ կորածներու զաւակներուն 2023-2024 ուսումնական տարեշրջանի երկրորդ կիսամեակի կրթաթոշակի գումարը, որպէսզի անոնք կարենան շարունակել իրենց ուսումը:



Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը կոչ ուղղեց անոնց, որոնք չեն արձանագրուած 2023-2024 տարեշրջանի առաջին կիսամեակի կրթաթոշակի նպաստ ստանալու համար՝ այցելելու նահատակներու, վիրաւորներու եւ անյայտ կորածներու տնօրէնութեան կամ նահանգներուն մէջ անոր բաժիններէն մէկուն, իրենց հետ ունենալով հաղորդագրութեան մէջ մանրամասնօրէն յիշուած փաստաթուղթերը:

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ Սուրիոյ նահատակներուն, ծանր վիրաւորներուն եւ անյայտ կորածներու զաւակներուն աջակերտական վարկ պիտի տրամադրէ առանց տոկոսադրոյթի, որպէսզի անձնական համակարգիչ ապահովեն:



Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց, որ Նախագահ Ասատին Սուրիոյ նահատակներուն, վիրաւորներուն եւ անյայտ կորածներուն զաւակներուն ցուցաբերած օգնութիւններուն լոյսին տակ, աջակերտական վարկ պիտի տրամադրէ յիշեալ պարագաներէն անոնց, որոնք իրենց համալսարանական ուսումը կը շարունակեն Սուրիոյ պետական կամ անձնական համալսարաններէն կամ հիմնարկներէն ներս, յատկապէս այն ճիւղերուն պարագային, որոնք կը պահանջեն անձնական համակարգիչ:

Վարկը 7 միլիոն ս.ո. է, 1 անգամ իրենց ուսումնական կեանքի ընթացքին, ամսական 10.000 ս.ո. վարկի մարման պայմանով:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ ստանձնեց Զասան Ահմետ Սուլեյման ալ-Շըհիի հաւատարմագիրը, որպէս Սուրիոյ Զանրապետութեան մէջ Արաբական Միացեալ Էմիրութիւններու լիազօր դեսպան:



2018-ին, Դամասկոսի մէջ Էմիրութիւններու դեսպանատան փակումէն ի վեր, դեսպանատան աշխատանքները ստանձնած էր ժամանակաւոր հաւատարմատար, խորհրդատու Ապտըլ Զաքիմ ալ-Նաաեմին:

2011-էն ի վեր Շըհիի առաջինն է, որ կը ստանձնէ Դամասկոսի մէջ Արաբական Միացեալ Էմիրութիւններու դեսպանի պաշտօնը:

-Սուրիոյ կառավարութիւնը համաձայնեցաւ Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան առաջարկին՝ երկրորդականի «պաքալորիա»-ի պետական քննութիւններու հարցարաններու թուայնացուած տարբերակը յետաձգելու 2024-2025 տարեշրջանի, իսկ 2023-2024 տարեշրջանի երկրորդականի պետական քննութիւններուն հարցարանները պիտի շարունակուին հին ծրագիրին համաձայն, գրաւոր ձեւով:



-Զինուորական աղբիւր մը ՍԱՆԱ-ի հաղորդեց, որ երկուշաբթի, 29 Յունուար 2024-ի յետմիջօրէ ժամը 1:00-ին, Իսրայել օդային յարձակում մը գործեց Կուլանէն Դամասկոսի հարաւային բաժինին մէջ կարգ մը զինուորական կեդրոններու ուղղութեամբ:



Յարձակումին հետեւանքով քաղաքացիներ նահատակուեցան, վիրաւորներ եւ նիւթական վնասներ արձանագրուեցան:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԻՔՈՎ

ԱՅՅ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ԴԻՏԻ ՄՐԵՆՔ ԳԱՐԱՓԱՐԱԿԱՆ ՄԵՐ ԴԱՅՔԱՐԸ

Հայոց պետականությանն ու հայ ժողովրդին ուղղուած գոյութեան կան լրջագոյն սպառնալիքների ու ծանր փորձութիւնների մթնոլորտում է կշռոււմ մեր երկրի անվտանգութեան ու պաշտպանութեան գլխաւոր երաշխաւորի՝ Հայոց բանակի կազմաւորման 32-ամեակը:

Արցախեան ազատամարտի բովում ծնունդ առաւ մեր բանակը՝ դառնալով անկախ պետականութիւն, անվտանգ ապագայ կերտելու մեր հաւաքական երազանքների եւ աննահանջ կամքի երաշխաւորը:

Հազարաւոր հայորդիների անմնացորդ նուիրումով ու խիզախումով, նրանց թանկ արեամբ նուաճեցինք յաղթանակներ, ամրագրեցինք մեր ազգային եւ պետական արժանապատուութիւնը: Սակայն, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների անվտանգութիւնն ապահովող, տարածաշրջանում ՀՀ-ն գործն դարձրած Հայոց բանակը 2018 թ. ցաւալիօրէն դաւաճանուեց երկրում իշխանութիւնը զաւթած խմբակի կողմից: Թիրախաւորելով եւ վարկաբեկելով բանակը, հեղինակագրկելով զինուած ուժերի սպայական կազմը, թուլացնելով Հայաստանի անվտանգային ողջ համակարգը՝ հայ ժողովուրդն ու Հայոց պետականութիւնը կանգնեցրին կորուստների եւ գոյութեան սպառնալիքների առջեւ: Աւաղ, սեփական յանցանքները բարդելով զինուած ուժերի վրայ՝ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարութիւնը շարունակում է իր անփառունակ եւ պետականակործան ընթացքը:



Եւ, այնուամենայնիւ, լիայոյս ենք, որ ազգային իղձերի վերահաստատումով կարող ենք եւ պարտաւոր ենք յաղթահարել մեզ ուղղուած ծանրագոյն սպառնալիքները, ինչպէս հայ ժողովուրդը կարողացել է անհնարինը դարձնել հնարաւոր:

Խոնարհուելով Հայոց պետականութեան կերտմանն իրենց կեանքը նուիրաբերած քաջորդիների շիրիմների առջեւ, ապաքինում մաղթելով Հայրենիքի պաշտպանութեան մարտերում վիրաւորուած բազմահազար մեր եղբայրներին եւ քոյրերին, ազատութիւն մաղթելով քաղաքական հայածեալ դարձած եւ ապօրինաբար ազատագրուած, հայրենիքին ծառայութիւններ մատուցած հարիւրաւոր հայորդիներին, շնորհաւորում ենք Հայոց բանակի օրուայ առիթով:

Համոզուած ենք, որ ներագգային համախմբուածութեամբ ու մեր հաւաքական կամքով ի գօրու ենք վերականգնել Հայոց բանակի հզօրութիւնը, ապահովելով Հայոց պետականութեան արժանապատիւ երթն ու Հայ ժողովրդի՝ սեփական հայրենիքում անվտանգ ապրելու իրաւունքը: Տօնը շնորհաւոր, Հայոց բանակ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմին 28 Յունուար 2024

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը, ՀՅԴ Երեւանի քաղաքային կոմիտէի եւ ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական Միութեան ու «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական Միութեան անդամներն ու քաղաքացիներ Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի յիշատակի օրուան առիթով ծաղիկներ զետեղած են անոր յուշարձանին առջեւ:

«Արամ Մանուկեանը օրինակ կը ծառայէր իր ներկայութեամբ, իր գաղափարներով, ինքնիշխան Հայաստանով, միայն սեփական ուժերու վրայ յենելով, թշնամիին առջեւ գլուխ չխոնարհեցնելով, թշնամիին ձեռք սեղմելով, անոր հետ խօսելով, բայց միայն այն պարագային, երբ Սարդարապատի մէջ յաղթանակ կերտած էր: Անոր արձանին մօտ ծաղիկ խոնարհեցնելով՝ Նոյն խոստումը կու տանք Արամին, որ թոյլ պիտի չտանք, ջանք ու եռանդ պիտի չխնայենք եւ պիտի մղենք մեր գաղափարական պայքարը: Այն արշաւը, որ նախածեռնած է այս ազգադաւ իշխանութիւնը՝ Հայաստան պետութեան, հայ ժողովուրդի, միասնական մեր հայրենիքի գաղափարին եւ Նոյնիսկ Արարատի դէմ, պիտի տապալի: Եւ Արամը փաթթուած եռագոյնով պիտի շարունակէ տեր ու տիրականը ըլլալ Հայաստանի Հանրապետութեան պետութեան, ինքնիշխանութեան, արժանապատուութեան պայքարի վե՛ր գաղափարին», իր ելոյթին մէջ ըսաւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի անդամ, ՀՀ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գեղամ Մանուկեան:



«Մեր յստակ տեսլականն է, որ Հայաստանը չի կրնար խաղաղութեան կեդօ օրակարգով յառաջ երթալ եւ միակողմանի զիջումներ ընել: Թուրքիան ու Ատրպէյճանը երբեք չեն յազենար իրենց կորդած պատառներով: Իւրաքանչիւր պատառէն վերջ, կը պահանջեն Նորը: Ինքնավստահ, ամբարտաւան, ռազմաշունչ յայտարարութիւններով Ատրպէյճանը կը փորձէ վախի տակ պահել Հայաստանը՝ քաջ գիտակցելով, որ Հայաստանի իշխանութիւնները պատրաստ են ամէն զնով զիջումներու», Կերկր.am-ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան: Ան գծեց մեր ընելիքները, որոնցմէ գլխաւորը՝ բանակի հզօրացումն է, իսկ երկրորդը՝ դիւանագիտական սխալներու սրբագրումն է, որոնց պատճառով երկիրը մեկուսացած վիճակի մէջ է եւ չունի այն կշիռը, որ ուներ անցեալին: «Մեր հայրենիքի պաշտպան ենք եւ մեզի համար պետութիւնը մնայուն է, իշխանութիւնները գնայուն», ընդգծեց Տեր Խաչատուրեան:

ԱՐՃԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՆՐԵՍ ԵՎԱԾ Է ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ

Յաջակցութիւն Արցախի՝ «Եւրոպացիները՝ Յանուն Արցախի» հարթակի նախաձեռնութեամբ 27 եւ 28 Յունուարին եւրոպական տասնչորս երկիրներու աւելի քան յիսուն քաղաքներու մէջ տեղի կ'ունենան տարբեր նախաձեռնութիւններ:

Նախաձեռնութիւններուն մասնակցած են Եւրոպայի հայութիւնը եւ տասնեակ եւրոպական կազմակերպութիւններ, որոնք իրենց ազգային կառավարութիւններուն եւ համաեւրոպական ղեկավար կառոյցներուն իրենց պահանջն ու յորդորը պիտի ներկայացնեն:

Այդ առիթով Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի չորս խըմբակցութիւններ ուղերձ յղած են նախաձեռնութիւններու մասնակիցներուն: Ուղերձին մէջ մասնաւորապէս ըսուած է.

«Այն ամէնը, ինչ տեղի ունեցաւ Արցախի մէջ 2020\_ի 44-օրեայ պատերազմի ընթացքին եւ 19 Սեպտեմբեր 2023-ին Ատրպէյճանի եւ Թուրքիոյ համագործակցութեամբ, ունի մէկ անուանում՝ Օսմանեան կայսրութեան ժամանակներէն սկիզբ առած թրքական յանցաւոր ծրագիրներու շարունակութիւն: 100 տարի առաջ հայ ժողովուրդը Յեղասպանութեան ենթարկելու գործողութիւնները կըրկ-



նուեցան մեր օրերուն, բայց մէկ, չլնչին տարբերութեամբ՝ առաջատար դեր վերապահելով Ատրպէյճանին:

Հազարամեայ պատմութիւն ունեցող հայկական Արցախը, որ մշտապէս դիմակայած է տարբեր հրոսակախումբերու ասպատակութիւններու, 21-րդ դարուն, միջազգային իրաւունքի անտեսման պայմաններուն տակ դէմ հանդիման կանգնեցաւ ատրպէյճանա-թրքական ուժերու կողմէն 2020 Սեպտեմբերին պարտադրուած պատերազմին, բազում զրկանքներ կրեց 9-ամեայ համընդհանուր շրջափակման օրերուն եւ հրեշաւոր ահաբեկչութեան ճամբով 2023 Սեպտեմբերին ենթարկուեցաւ ցեղային զտումի: Իրականացուող ցեղասպանութեան ու անոր սպառնալիքին տակ 120 հազար արցախցի հայեր ստիպուած էին հեռանալ իրենց բնօրրանէն՝ ձգելով նախնիներու հարուստ պատմա-մշակութային ժառանգութիւնը, քրիստոնէական սրբավայրերը եւ սեփական օճախները:

Հայերու հանդէպ Ատրպէյճանի իշխանութիւններու ցեղասպանական քաղաքականութիւնը, ատելութիւնն ու թշնամանքը տասնամեակներ շարունակ իր արտացոլումը գտած է Սումկայիթէն մինչեւ Մարաղա՝ հայաշատ բնակավայրերուն մէջ տեղի ունեցած ջարդերու, ոճրագործութիւններու միջոցով: Եւ այն իրողութիւնը, որ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները կը շարունակեն գերեզմարուած մալ Պաքուի բանտերուն մէջ, կը հաստատէ այդ երկրի պաշտօնական շրջանակներու կողմէն հակահայկական քաղաքականութիւնը շարունակելու մտադրութիւնները:

Եւրոպայի 14 երկիրներու 50-էն աւելի քաղաքներուն մէջ յաջակցութիւն Արցախի նախատեսուող նախաձեռնութիւնները, վերը նկարագրուած աղետալի պայմաններուն մէջ յոյս ներշնչող բացառիկ ազդակներ են: «Եւ-

## «ԵՐՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ» ՆԱՄԱԵՐՈՊԱԿԱՆ ԶՕՐԱՇԱՐԺ

### Երոպահայութիւնը կը շեշտէ իր յանձնառութիւնը շարունակելու պայքարը արցախահայութեան իրաւունքներուն պաշտպանութեան համար

27 Յունուար 2024-ին, ինչպէս նախատեսուած էր, ծայր առաւ երկու օրերու վրայ երկարող «Երոպացիները Յանուն Արցախի» շարժումին կազմակերպած, իր տեսակին մէջ երկրորդ բողոքի ցոյցերու շարքը: Առաջինը տեղի ունեցած էր 1 Յոկտեմբեր 2023-ին Պելճիքայի մայրաքաղաք՝ Պրիւքսէլի մէջ:

Նախապէս մամուլին յղած իր հաղորդագրութեան մէջ շարժումը՝ «Պայքարը պետք է շարունակուի» հրամայականին տակ կոչ ուղղած էր Երոպայի հայերուն, ինչպէս նաեւ Արցախի երոպացի բարեկամներուն 27 եւ 28 Յունուարին համախմբուելու երոպական անելի քան 50 քաղաքներու մէջ, եւ իրենց բողոքը արտայայտելու՝ դատապարտելով Ատրպէյճանի իշխանութիւններու ցեղային գտման եւ ցեղասպան քաղաքականութիւնը, պահանջելով ազատ արձակել ռազմագերիները, զօրակցութիւն յայտնել իրենց հողերէն բռնի տեղահանուած արցախահայութեան եւ մղելու երոպական պետութիւնները ի հարկին պատժամիջոցներ գործադրելու Պաքուի բռնապետական իշխանութեան դէմ:

Ինչպէս 1 Յոկտեմբեր 2023-ի համահայկական ցոյցին, այսօր եւս շարժումը յաջողեցաւ զօրաշարժի ենթարկել Երոպայի հայութիւնը, միաւորելով հարիւրաւոր կազմակերպութիւններ, անգամ մը եւս հաստատելով Արցախի արդար դատին համար պայքարի նոր փուլ անցնելու հայութեան վճռականութիւնը:

Հաւաքներու ընթացքին կարդացուեցաւ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի խմբակցութիւններու ուղարկած ուղերձը, որ «Երոպացիներ Յանուն Արցախի» շարժումին կազմակերպած նախաձեռնութիւններուն զօրակցութիւն յայտնելէ ետք, կ'ըսէր թէ անոնք «այս աղետալի պայմաններուն մէջ յոյս ներշնչող բացառիկ ազդակներ են» եւ արցախահայութեան անունով «Երախտագիտութիւն կը յայտնեն այն հոգատարութեան եւ աջակցելու պատրաստակամութեան համար, որ կը ցուցաբերեն երոպական հարիւրաւոր կազմակերպութիւններ՝ Արցախի օժանդակութեան նպատակին շուրջ օրակարգ ձեւաւորելու մեծածաւալ աշխատանքին միջոցով»: Ապա՝ կը հաստատէր թէ «Խորապէս համոզուած ենք, որ համազգային համախմբումը եւ անոր սահմաններու ընդլայնումը, հայրենիքի մէջ պահանջուած ու սպասուող աշխատանքի իրականացման հետ մէկտեղ, կարող են ստեղծել այն նախադրեալները, որոնք անհրաժեշտ են մեր գլոխաւոր խնդրի՝ անվտանգութեան միջազգային երաշխիքներով, Արցախի ժողովուրդին հաւաքական վերադարձը իրականացնելու համար»:

● Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ կազմակերպուած հաւաքին, Նիսի եւ շրջակայքի հայութեան կողքին ներկայ եղած են քաղաքապետ Christian



Estrosi, քաղաքապետական խորհուրդի անդամներ՝ Մակալի Ալթունեան, Կայէլ Նոֆրի, Ֆրանք Մարթին, եւ Իգապէլ Վիգանթէն, ինչպէս նաեւ Աթի Մարիթիմ նահանգի փոխ նախագահ՝ Օկիւտ Վերոլա:

Յատկանշական է նաեւ Նիսի մէջ տեղի ունեցած հաւաքին թուրք այլախոհ քաղաքական գործիչ Փընար Սէլէքի ուղերձը, ուր զօրակցութիւն յայտնելէ ետք ցուցարարներուն, կ'ըսէր թէ հակառակ անոր, որ ինք հայ չէ, սակայն պատրաստ է պայքարելու Հայաստանի համար, որովհետեւ աշխարհը արդար պարտք մը ունի տալիք Հայաստանին: Ան կ'աւելցնէ ու կ'ըսէ որ Հայաստանը պաշտպանելով՝ պաշտպանած կ'ըլլանք նաեւ արդարութիւնը, արժանապատուութիւնը եւ խաղաղութիւնը:

● Ֆրանսայի Զլէր Մոնֆերան քաղաքին մէջ տեղի ունեցած հաւաքին, քաղաքի հայութեան կողքին, ներկայ եղան տեղւոյն քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներ:

● Ֆրանսայի Սթրազպուրկ քաղաքին մէջ գտնուող Մարիու Իրաւունքներու Երոպական դատարանին շէնքին դիմաց ալ խումբ մը հայեր բարձ-



րացուցին իրենց բողոքի ձայնը եւ պատասխանեցին թղթակիցներու հարցումներուն:

● Ֆրանսայի Մէյզիոյ քաղաքին մէջ տեղի հայութեան կողքին հաւաքին ներկայ եղան քաղաքապետական խորհուրդի 4 անդամներ, որոնց կարգին՝ փոխ քաղաքապետ տիկին Օտէթ Կարպրէ:

● Շուէտի Ստոքհոլմի մէջ տեղի ունեցան հաւաքներ մասնակցութեամբ քաղաքի բնակիչներուն: Հաւաքներուն ընթացքին իրազեկման աշխատանք մը տար



ներկայացուեցան «Երոպացիները Արցախի Համար» շարժումին արցախահայութեան առնչուող պահանջները:

● Լոնտոնի մէջ առաջնորդ սրբազանին եւ գաղութի միութիւններու պատասխանատուներուն մասնակցութեամբ կազմակերպուեցաւ հանդիպում մը որուն ընթացքին, անգլիահայ գաղութի համայնքային խորհուրդի եւ թեմի առաջնորդին անունով հրապարակուեցաւ Արցախի դատին եւ արցախահայութեան իրաւունքներուն զօրակցող յայտարարութիւն: Լոնտոնի կեդրոնական թաղամասին մէջ, լոնտոնահայ երիտասարդներ բաժնեցին Արցախի դատը ներկայացնող թռուցիկներ:

● Գերմանիոյ Զեռլն, Համպուրկ եւ Պրէմըն քաղաքներուն մէջ տեղի ունեցան նախաձեռնութիւններ. գաղութներու հայ երիտասարդութիւնը եւ բազմաթիւ անդամներ Արցախի զօրակցական խօսքեր արտասանեցին:

**28 Յունուար 2024**

● 28 Յունուար 2024-ին, Ֆրանսայի Ալֆորվիլ քաղաքի հայութիւնը



ժամադրուած էր Ալֆորվիլի քաղաքապետարանի հրապարակը՝ զօրակցելու «Երոպացիները յանուն Արցախի» կազմակերպած զօրահաւաքին:

Զակի մը հարիւր հայորդիներու ներկայութեան՝ ժամը 12-ին շարժումին անունով խօսք առաւ Արին Թաշճեան, որ դատապարտեց Ատրպէյճան

Սկիզբ՝ էջ 4

Նի վարած ոճրային քաղաքականությունը և ներկայացուց 2023-ին գերեվարած քաղաքական դեմքերու կենսագրականները: Կարդաց Արցախի Հանրապետության ուղերձը և շնորհակալություն յայտնեց Եւրոպայի 50 քաղաքներու մէջ այս երկու օրերուն շարժումին աջակցող բոլոր կազմակերպութիւններուն:

Այս խօսք առաւ Արցախի Հանրապետության ներկայացուցիչ՝ Յովհաննես Գեորգեանը, որ քաղաքական մեղադրանքներէն անկին, շեշտը դրաւ հայկական իրականության մէջ այսօր՝ աւելի քան երբեք, միասին ուղղութիւն ճշդելու անհրաժեշտութեան, ապահովութիւնը պահպանելու կարեւորութեան՝ յարգելով Արցախի սիրոյն մեր բոլոր գոհուածներուն յիշատակը: Խօսքին աւարտին, ան շնորհակալութիւն յայտնեց Արցախի ժողովուրդին ի նպաստ Ալֆորվիլի քաղաքապետարանին՝ ցուցաբերած կեցուածքներուն և իրականացուցած քայլերուն համար:

Այս խօսք առաւ Ալֆորվիլի քաղաքապետ՝ Լիւք Զարվոնաս, որ գօրակցութիւն յայտնեց Արցախի քաղաքական բանտարկեալները առանց նախապայմանի ազատ արձակելու յանձնառութեան, դատապարտեց հայ ժողովուրդին հանդէպ գործադրուած ցեղասպանութիւնը և եթէք բնաջնջումը, պահանջեց Արցախի բնակիչներու տունդարձի ապահովում և վերջապէս կարելորեց հայ-ֆրանսական բարեկամութիւնը: Ան ընդգծեց, որ այս տարի կը նախատեսուի պաշտօնական այցով կրկին այցելել Հայաստան:

Այս խօսքը փոխանցուեցաւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Սուրատ Փափազեանին, որ անդրադարձաւ Արցախի պաշարումէն մինչէ Արցախի հայաթափման՝ և աւելցուց, որ պէտք է բացառել պարտուողական ամեն կեցուածք և ընթացք, այլ ընդհակառակն խրախուսեց ներկաները ըլլալու աւելի խրոխտ և վճռական: Չգաստութեան և պայքարելու կոչ ուղղեց ան՝ վերադարձնելու Արցախը և պահպանելու Հայաստանի սահմանները:

Յայտագիրի յաջորդ խօսքը արտասանեց Վալ Տեո Մարնի երեսփոխան՝ Իգապէլ Սանթիակո: Վերջին խօսողն էր Վալ Տեո Մարնի սենաթիս Լորանս Ռոսինիոլ:

Հայր Տիրայր Գըլըճեանի և պատուելի ժիւլպէր Լեոնեանի տերունական աղօթքէն ետք Սուրբ Մեսրոպ – Արապեանի աշակերտները յաջորդաբար երգեցին՝ Արցախի, Հայաստանի և Ֆրանսայի քայլերգները:

Փարիզի մէջ, եկեղեցւոյ բակին մէջ խմբուած ժողովուրդը արարողութենէն անմիջապէս ետք, առաջնորդութեամբ սրբազան հօր, քալելով ուղղուեցաւ դէպի Կոմիտասի արձանը, ուր տեղի ունեցաւ ցոյց-հաւաքը: Ֆրանսայի, Հայաստանի և Արցախի քայլերգներէն ետք կարդացուեցան ուղերձները: Հաւաքին ներկայ էին ֆրանսական մամուլի ներկայացուցիչներ:

Ֆրանսայի Տեսին քաղաքին մէջ, տեղւոյն միութիւնները կազմակերպեցին Արցախի գաղթականներու ի նպաստ բարեսիրական ձեռնարկ մը: Բազմահարիւր բնակիչներ այցելեցին ձեռնարկին վայրը:

Ֆրանսայի Իսի ԼԷ Մուլինոյի Սուրբ Մ. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ հաւաքուած հոծ բազմութիւնը իր գօրակցութիւնը յայտնեց:



Արցախի արդար դատին: Հաւաքին խօսք առաւ Իսի ԼԷ Մուլինոյի փոխ քաղաքապետ Յարութ Խանճեան:

Ֆրանսայի Վալանս քաղաքին հաւաքը տեղի ունեցաւ կէսօրէն ետք ժամը 17:00-ին Պանսել պողոտայի հսկայական շատրուանին մօտակայքը: Ներկայ էին գանազան միութիւններու ներկայացուցիչներ, հոգեւոր հայրեր և քաղաքական դեմքեր՝ Վալանսի քաղաքապետ Նիքոլա Տարակոնը և կարգ մը փոխ քաղաքապետներ և խորհրդականներ՝ Վերոնիք Բիւժա, Օրօր Նատար, Ֆրանք Սուլինեան, Նաթալի Իլիգօր և ժողովուրդի Ռասթիս, ծերակուտական Պեռնար Պիլի և Շրջանի խորհրդատու Աննա Փլասը:

Նախ խօսք առաւ Օրօր Նատարը և դատապարտեց Արցախի բռնագրաւումը և Ատրպէյճանի ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածքէն ներս: Ծերակուտական Պեռնար Պիլին ալ դատապարտեց Ատրպէյճանը՝ Արցախի բռնագրաւման համար և շեշտեց որ Ֆրանսան միշտ դատապարտած է Պաքուի վերաբերմունքը և պաշտպանած Հայաստանը և Ար-

ցախիներու իրաւունքները: Նիքոլա Տարակոն ալ իր կարգին դատապարտեց Արցախի բռնագրաւումը և Ատրպէյճանի Հայաստան ներխուժումը: Ան կոչ ուղղեց միջազգային հանրութեան հակազդելու և հաստատեց Արցախահայրութեան իրաւունքը վերադառնալու հայրենի հողեր և ապահով ապրելու պատմական հայրենիքին մէջ:

Ֆրանսայի Շաթրուի (Chataurox) հայութիւնը հաւաքուեցաւ հանրապետութեան հրապարակը ուր կարդացուեցան ֆրանսերէն և հայերէն լեզուներով ուղերձներ: Յոյցին իր մասնակցութիւնը բերաւ Շաթրուի քաղաքապետը:

Ֆրանսայի Բլէսի Ռօպէլսոն քաղաքի ցոյցը սկսաւ ժամը 16:00-ին Ազատութեան հրապարակ, Անդրանիկ գօրավարի արձանին և հոն տեղադրուած խաչքարին մօտակայքին: Փոխ քաղաքապետ Զոռնի Մար Տիւլէր խօսք առաւ, ինչպէս նաեւ Իւնիսոն (Unisson) միութեան ներկայացուցիչը: Ներկայ էին նաեւ փոխ քաղաքապետներ Սիրիլ Փեքրիօ, Էլիզապէթ Տիւպուա և խորհրդական Սանտրա Պասմաճեան:

Ֆրանսայի Փալէզօ քաղաքին մէջ տեղի ունեցաւ, իրազեկման աշխատանք, քաղաքի հայկական կազմակերպութիւնները քաղաքի կեդրոնական հրապարակին վրայ բաժնեցին թռուցիկներ:

Ֆրանսայի Մարսէլ քաղաքին հաւաքներ տեղի ունեցան քաղաքի երեք եկեղեցիներու շրջափակներէն ներս: Պոմոնի եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ձեռնարկ մասնակցութեամբ հոծ բազմութեան մը, տարբեր միութիւններու ներկայացուցիչներու, ներկայ էին ՀՅԴ Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հրաչ Վարժապետեան, ժիւլպէր Տատրոնեան, ժիւլպէր Մարքոյեան, Էրիք Սարաճեան, Ազատ Պալալաւ/Գագանճեան, Տիտիլ ֓արաքեան: Հայր Արշէն Մովսիսեան իր խօսքին մէջ նշեց՝ «Արդէն քանի մը ամիս է որ Արցախի մեր դեկավարները կը գտնուին Ատրպէյճանի բանտերուն մէջ: Այս տեսակի հաւաքներ տեղի կ'ունենան այսօր Ֆրանսայի տարածքին որպէսզի մենք, հայերս, չմոռնանք այն ինչ որ պատահեցաւ անցեալ տարի, չմոռնանք որ գերիներ ունինք, չմոռնանք որ բռնի տեղահանուած հայրենակիցներ ունինք... Մեր կարելին ընենք, որ այս բոլորը չմոռցուի և մեր ծայրը բարձրացնենք առ աշխարհ որպէսզի գերիները տուն վերադառնան, այն յոյսով որ օր մը բոլորս վերադառնանք մեր պատմական հայրենիքը: Եթէ մենք այս երազը չունենանք, միւսները մեզի չեն օգնել: Ուրեմն ամէն օր, ամէն երկվայրկեան փորձենք յիշել որ մենք պահանջատիրութեան պայքար ունինք, որպէսզի օր մը մեր կենքը շարունակենք մեր պապենական հայրենիքին մէջ»:

Ֆրանսայի Անուվիլ քաղաքի հաւաքին մասնակցեցան նաեւ Սարսելի, Սըվրանի և Լիվրիի միութիւնները: Ներկայ էր Անուվիլի քաղաքապետ Փասքալ Տօլը, ընկերակցութեամբ կարգ մը փոխ քաղաքապետներու և խորհրդականներու: Հոգեւոր հայրեր ալ մասնակցեցան հաւաքին: Զաղաքական և միութենական դեմքեր խօսք առին, ընթերցուեցաւ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցութիւններուն ուղերձը մասնակիցներուն: Մշակութային ամփոփ յայտագիր մը ներկայացուեցաւ հանրութեան: Քաղաքապետ Փասքալ Տօլը յայտարարեց՝ Ինչ որ կը պատահի Արցախի մէջ շարունակութիւնն է 1915-ի Ցեղասպանութեան: Ալիւր և Էրտողանը կանգ պիտի չառնեն եթէ Եւրոպան, Ֆրանսան և Հայաստանի բարեկամները չմիջամտեն: Պետք է քաղաքական քաջութիւն ունենալ և զգօնութիւն մեր ժողովրդավար պետութիւններուն սպառնացող վտանգին: Պետք չէ միայն Արցախի և Հայաստանի ժողովուրդը պաշտպանել այսօր, այլ իսկապէս ինչ որ ունինք մեր խորքին մէջ: գիտակցութիւնը որ քաղաքակրթութիւնը և ժողովրդավարութիւնը, որ մենք կը ներկայացնենք, վտանգի տակ են այսօր:

(շար. 1)

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ
Խմբագիր՝ Չարմիկ Զիւլպօջեան-Պողիկեան
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլպօջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811
- Ծանուցողներէն և աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին և կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

### ՆՈՒՍԻԱՆ ԹՈՒՐԵՒՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Հալեպ, 28 Յունուար 2024)

Պատմակերտ դեմքեր կան, որոնք նկարագրի, նուիրումի ու վաստակի իւրայատուկ համադրումով մը՝ անյայտեն եւ անյայտօրէն եկող կեանքին մէջ կրնան ապրելու իրենց



ու դիմագիծ տուաւ Բերիոյ Հայոց պատմական Թեմին, երբ համայնքի կեանքին այլաբնոյթ բնագաւառներուն վերածադկումի, ինչու չէ վերագարթօնքի նորագոյն պատումները արձանագրուեցան իր պաշտօնավարութեան շրջանին:

Հոգելոյս Սուրբ Արք. Գաթարոյեան Բերիոյ Հայոց Թեմէն ներս՝ շուրջ երեք տասնամեակ առանց ինքնզինքէն պարպուելու, իր վարակիչ կենսունակութեամբ հերկեց ու մշակեց իր ծառայութեան Աստուածահաճոյ անդաստանէն ներս, եղաւ բոլորին հետ ու բոլորին համար: Որպէս հոգեւոր հայր, ան միշտ մնաց հաղորդական ու ջերմ, գթառատ՝ բայց եւ արդարադատ, յաջողեցաւ մտերմանալ ու նոյնանալ իր ժողովուրդի բոլոր գաւակներուն հետ անխտիր, բաժնեց անոնց տագնապները, ծերունիին յոյս եւ երիտասարդին կամք ու կորով ներշնչեց: Հետեւաբար, որպէս

ուրոյն ոճը ստեղծել, առանց տժգունելու դիմաւորել ժամանակի շարալար հողովոյթները եւ շարունակել պիրկ կամքով ծաղկեցնել պատմութեան էջերը:

Ադայիսներէն էր Հոգելոյս Սուրբ Արք. Գաթարոյեան, որ 1977-էն մինչեւ 2004 արժանաւորապէս գրաւեց Բերիոյ Հայոց Թեմի Գաւազակապետի 60-րդ տեղը:

Ներկայ ժամանակներուն, երբ մարդկային կեանքի այլազան բնագաւառները մասնագիտական գործունեութեան, վարձատրուած պաշտօնի կամ ասպարեզի չափանիշերով յազեցած են, եւ ինքնակամ ծառայութիւնը սկսած է ստուերոտ պատկեր մը պարզել, Հոգելոյս Սուրբ Արք. Գաթարոյեան, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբան եւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ, նոր սլացք տուաւ ինքնընծայումի գաղափարին ու ձգտումին՝ իբրեւ սիրոյ ճառագայթում, վասն Աստուծոյ եւ աստուածային ստեղծագործութեան:

Արդարեւ, ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար նշանաբանը իր հոգեւորականի կեանքին ու հոգեւոր ծառայութեան ուղեգիծ ընտրած այս անձնորդի եկեղեցականը, գարմանալի ներդաշնակութեամբ յաջողեցաւ նոյնացնել իր անձն ու առաքելութիւնը, ամբողջական գիտակցութեամբ ընդունիլ կոչումին երբեմն յուսադրիչ, բայց յաճախ սպառնիչ պարտաւորութիւնները հաւասարապէս, եւ ինքնաբաշխումի պերճագէտ օրինակով մը նոր գոյն

Բազմերախտ Հոգեւորական եւ առաջնորդ՝ որուն սիրտը բաբախեց համայնքի կեանքին կշռոյթով, ժամանակի անզիջող երկնակամարին վրայ իր բազմաբեղուն վաստակն է, որ յարաժամ կը ճառագայթէ եւ պերճախօս կը վկայէ լուսասփիռ անձին ու գործին մասին:

Հոգելոյս Սուրբ Արք. Գաթարոյեան հետեւեալ կերպով կը սահմանէր ծառայութեան իմաստը.

«Կը հաւատամ, որ եթէ ծառայութիւնը անմիջական անթրադարձը չըլլայ գիտակից նուիրումին, նուիրումը չի կրնար բեղմնաւորուիլ ու արգասաւորուիլ մեր ժողովուրդին կեանքին մէջ»:

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Իշխանութեան կողմէ, 2002 թուականին Հալեպի մէջ մեծ շուքով նշուեցաւ անոր Բաժանապատկան Զեռնադրութեան Զատնանամեակն ու Թեմի Առաջնորդութեան Զատնանիւգամեակը, Բարձր Ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի, որ գնահատանքի իր խօսքին մէջ նաեւ ըսած էր.

«Դուք, ձեր քառասնամեայ հոգեւոր առաքելութիւնը իրագործեցիք Կաթողիկոսարանէն ներս ու ապա Զանաւատայի եւ Հալեպի մէջ, բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ ու կոչումի բարձր գիտակցութեամբ: Ձեր հոգեւոր ծառայութեան մէջ իւրայատուկ տեղ ունեցաւ ձեր Առաջնորդական ծառայութիւնը Բերիոյ Թեմէն ներս»:

### Թուրքիոյ նուրջ

#### ՈՒՍԻԱՆ ԹՈՒՐԵՒՆ ԿԸ ՅԻՇԵՆԷ, ՈՐ ԹՐԵԱԿԱՆ ԶՕՐԸՆ ԴՈՒՐՍ ԴԻՏԻ ՊԱՅՏ ՍՈՒԻԱՅԷՆ

Սուրիոյ հարցով Ռուսիոյ նախագահի յատուկ ներկայացուցիչ Ալեքսանտր Լաւրենտեւ ռուսական ԹԱՍՍ լրատուամիջոցին հետ գրոյցին ընթացքին խօսած է թուրք-սուրիական յարաբերութիւններու կարգաւորման, ինչպէս նաեւ Սուրիոյ տարածքին օտարերկրեայ զինեալ ուժերու ներկայութեան մասին:

Ռուս պաշտօնեան մասնաւորապէս անդրադարձած է Թուրքիոյ զինեալ ուժերուն եւ վերջիններուն կողմէ աջակցութիւն վայելող Սուրիոյ զինեալ խմբաւորումներու վերահսկողութեան տակ գտնուող տարածքներուն:

«Անցեալ տարեվերջի աշնան սկսած այս գործընթացը որոշ չափով կանգ առած է, նախ այն պատճառով, որ սուրիական կողմը անհրաժեշտ համարած է թրջական կողմէն երաշխիքներ ստանալ, որ ռազմական իր ստորաբաժանումները, որոնք մինչեւ այժմ անօրինական կերպով Սուրիա կը գտնուին, դուրս բերուին», յայտնած է ան:

Անոր համաձայն, Անգարան ցարդ որոշում չէ գոյացուցած գորքերը դուրս բերելու Սուրիայէն, բայց Լաւրենտեւի դիտարկումով, մասնաւորապէս նախկին արտագործնախարար Մելուք Չայուշօլուն յայտնած էր, որ իրենք մտադիր չեն մնալ Սուրիա եւ ուշ կամ կանուխ, երբ համապատասխան պայմաններ ստեղծուին, թրջական գորախումբը դուրս կը բերուի:

Ռուսիոյ նախագահի յատուկ ներկայացուցիչը ընդգծած է, որ թուրք-սուրիական յարաբերութիւններու կարգաւորման հարցը Ռուսիոյ Դաշնութեան առաջնահերթութիւններէն կը համարուի:

Լաւրենտեւ անցընելով ըսած է, որ անցեալ տարի գործուն քայլեր իրականացուած են այդ ուղղութեամբ? «Սկիզբը գոյութիւն ունէր եռակողմ ձեւաչափը, ապա քառակողմ ձեւաչափը: Հանդիպումներ տեղի ունեցան պաշտպանութեան եւ արտաքին գործոց նախարարներու միջեւ, ետքը հանդիպումներ եղան արտաքին գործոց նախարարներու եւ փոխնախարարներու մակարդակով», անցընեցած է ան:



Ծառայութիւն մը, որ լեցուեցաւ կարեւոր իրագործումներով հոգեւոր, ազգային, կրթական, մշակութային, ընկերային ծառայութեան եւ այլ բնագաւառներէ ներս: Ծառայութիւն մը, որ հարստացաւ ծրագրուած գործունեութեամբ, հետեւողական աշխատանքով, եւ մասնաւոր ամբողջական նուիրումի ոգիով ու գիտակից յանձնառութեամբ: Ծառայութիւն մը, որ մեծ գնահատանքի արժանացաւ Բերիոյ Թեմի Ազգ. Իշխանութեան, թեմակալ ժողովուրդին, քոյր համայնքներուն, քրիստոնէայ եկեղեցիներուն, պետական եւ օտար շրջանակներու կողմէ: Արդարեւ, դուք ձեր նուիրեալ ծառայութեամբ ու անխոնջ վաստակով ձեր խոր դրոշմը ձգեցիք Բերիոյ Թեմի պատմութեան էջերուն...»:

Վկայութիւններու շարքը երկար է, սակայն անվարան կրնանք արձանագրել.

Հալեպի գաւակ Սուրբ Արք. Գաթարոյեան որպէս՝  
ՀԱԻՏԱԿՈՐ ԵՒ ԱԲԱՆԴԱՊԱԶ  
ՀՈՒՍԻԱՆ ԹՈՒՐԵՒՆԻ ԿԸ ՅԻՇԵՆԷ,  
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԴ,  
ՇԻՆԱՐԱՐ ԱՌԱՋՆՈՐԴ,  
Իր անփոխարինելի դերը ունեցաւ Բերիոյ Հայոց Թեմը եւ յատկա-

պէս Թեմի պատմական նստավայր Հալեպը պահելով իր արժանի պատուանդանին վրայ, երբ այսօր եւս Թեմակալ Առաջնորդ Գեղ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանի գլխաւորութեամբ, յատկապէս Մայր գաղութը տիրող պայմաններով հանդերձ, կը մնայ ներգործող ուժ եւ պատուաստող արմատ, պատրաստ իրեն վերապահուած ու վստահուած դերակատարութիւնը ստանձնելու ամբողջանուէր կերպով՝ ի Մայր Հայաստան եւ ի Սփիւռք աշխարհի:

Մարդկայնօրէն խօսքերը տեղ մը կ'աւարտին, սակայն խորքին մէջ այս պարագային կը մնան շարունակելի: Կարելի չէ վաւերական մեծութիւն մը եւ տասնամեակներու պերճիմաստ ծառայական կեանք մը սոսկ տողերու մէջ ամփոփել, վըստահաբար տակաւին շա՛տ երկար պիտի յիշենք Թեմի երբեմնի 60-րդ տարեկանի յիշատակը, մեզ ի կը մնայ ձայնակցիլ պատմութեան հընչեղ ձայնին, որ սրտամորմոք կը յուշէ:

Ձեր վարձքը կատար եւ վաստակը արդար, սիրելի՛ Սուրբ Արք. Գաթարոյեան: Հոգը թեթեւ ըլլալ եւ յիշատակը անթառամ:

Հալեպ  
Հոյի Ազգեան  
28 Յունուար 2024

Պրիմալկտ

## ԽԱՉՔԱՌ



Մարուշ Երամյան

Ամեն անգամ, որ օգակայանի մը սրահներուն մէջ կը ստիպուիմ թափառիլ, սպասելով յաջորդ թռիչքին, անպայման գրախանութ մը կը մտնեմ, թերթերը, հանդէսներն ու ժամանցի բաժինը կը դիտեմ, երկար կը յամենամ, եւ եթէ նոյնիսկ ոչ մէկ բան գտնեմ, գոհունակութեամբ դուրս կու գամ

**FUN'S Word-Cross Puzzle.**

**FILL** in the small squares with words which agree with the following definitions:

2-3. What bargain hunters enjoy.	10-11. A bird.	19-28. A pigeon.
4-5. A written acknowledgment.	14-15. Opposed to less.	F-7. Part of your head.
6-7. Such and nothing more.	18-19. What this puzzle is.	23-30. A river in Russia.
10-11. A bird.	22-23. An animal of prey.	1-32. To govern.
F-7. Part of your head.	26-27. The close of a day.	33-34. An aromatic plant.
18-19. What this puzzle is.	28-29. To elude.	N-8. A fist.
22-23. An animal of prey.	30-31. The plural of is.	24-31. To agree with.
26-27. The close of a day.	8-9. To cultivate.	3-12. Part of a ship.
28-29. To elude.	12-13. A bar of wood or iron.	20-29. One.
30-31. The plural of is.	16-17. What artists learn to do.	5-27. Exchanging.
8-9. To cultivate.	20-21. Fastened.	9-25. Sunk in mud.
12-13. A bar of wood or iron.	24-25. Found on the seashore.	13-21. A boy.

**Առաջին խաչբառը**

Եւ լախալերն ու, մինչ Սփիւռքի մէջ փոքրերն ու մեծերը գրկուած են նման պարզ հաճոյքներէ:

Մեր թերթերն շատերը, ինչպէս «Գանձասար»-ն ու «Ազգակ»-ը ունին իրենց խաչբառի բաժինը: Ինչո՞ւ տարեկան գրքոյկ մըն ալ չհրատարակեն, որպէսզի փափաքողը հետը տանի, ճամբորդութեան կամ արձակուրդի ընթացքին գաղտնի համար:

Այս գրախանութները ընդհանրապէս նաեւ ունին բաժին մը, տրամադրուած «սեղանի խաղեր»-ուն:

Կը յիշեմ որ իմ օրերուն կար օձի խաղը, կամ օձեր եւ աստիճաններ խաղը, կար խաչածէ տախտակը, որուն վրայ քարերը պետք էր քալեցնել ըստ գարի թիւերուն, եւ կար ... կար ուրիշ բան. չեմ յիշեր:

Չաւակներու օրով ասոնց աւելցեր էր «Գիտութեան Անի»-ը, որ մեծ հաճոյքով կը խաղային տղաքս:

Հիմա սակայն կը տեսնեմ, որ անընդհատ «սեղանի խաղեր»-ն տարբերակներ կը յայտնուին շուկաներուն կամ համացանցին վրայ, ինչ որ կը նշանակէ, թէ մարդիկ կան, որոնք նուիրուած են այս գործին եւ որոնց աշխատանքը տարբեր ... ստեղծելն է: Ծախս խելացի պետք է ըլլան նման մարդիկ տարբեր ստեղծելու համար, ճիշդ այլ բան ստեղծողներուն պէս:

Իմ ամենէն աւելի սիրած խաղս խաչբառն է, թերեւս նաեւ անոր համար, որ մարդ անպայմանօրէն խաղընկերի պետք չունի, առանձինն ալ կրնայ խաղալ: Եւ անշուշտ՝ բառխաղը, հայերէնով խաղցող աշխարհի թերեւս ամենէն աւելի սիրուած խաղին՝ scrabble-ին հայերէն տարբերակը, որ քանի մը տասնամեակ առաջ Յալէպի մէջ Վահէ ժամագործեանը պատաստեր էր, եթէ յիշողութիւնս խաղեր չէ սկսած խաղալ գլխուս:

Բայց խաչբառը ե՞րբ ստեղծուեր է արդեօք:

Այս առումով իրապէ՛ս օգտակար է համացանցը, որ աչքերուդ առջեւ կը փռէ ոչ թէ հազարաւոր, այլ յաճախ միլիոնաւոր էջեր, ինչպէս ճիշդ հի-

մա, երբ crossword կը գրեմ եւ 38 երկվայրկեանուան ընթացքին մօտաւորապէս 620 միլիոն էջ կը բանայ:

Այս էջերն մէկէն է որ կ'իմանամ, թէ խաչբառը տարբեր մըն է, առաջին անգամ 21 հեկտեմբեր 1913-ին The New York World թերթին մէջ երեւցած եւ որուն ստեղծողը անգլիացի թղթակից Արթըր Ուայնը եղած է:

Անշուշտ այդ առաջին խաչբառը չունէր այսօրուան ձեւը՝ սեւ եւ ճերմակ քառակուսիներու յաջորդականութեամբ. այնտեղ միայն ճերմակ կամ պարզ քառակուսիներ կային:

Գովիտի տարածումին եւ շրջափակումին երկու տարիներուն, մարդիկ վերադարձան իրենց նախկին գաղղումներուն, որոնցմէ մէկն ալ խաչբառն լուծելն էր. կ'ըսուի թէ այդ օրերուն համացանցէն ներբեռնուած է 125 % աւելի խաչբառ, քան՝ նախապէս:

Այսօր ալ շատեր կը խաղան այս խաղը, քանի մը պատճառներով:

Ա. Խաչբառը կ'օգնէ ուղեղի աշխատանքին, կ'օգնէ որ ուղեղը չճեղքուի լանայ եւ ենթակայ չդառնայ տարիքին հետ յառաջացող հիւանդութիւններու:

Բ. Խաչբառը իրապէ՛ս հանգստացնող խաղ մըն է, մանաւանդ ծանր աշխատանքային օրուան մը աւարտին, որովհետեւ – ճիշդ վախ պարողներուն պէս, որոնք քիչ մը դէպի աջ ուղորաններով պարելէ ետք, կը սկսին դէպի ձախ դառնալով պարել, որպէսզի գլխու պտոյտ չունենան – այդ ձեւով ալ խաչբառը կ'օգնէ որ ուղեղը քակուի իր առօրեայ աշխատանքէն եւ տարբեր սկսի բանիլ, ինչ որ հանգստութիւն կը պատճառէ:

Գ. Խաչբառը լաւագոյն ձեւ մըն է տարբերակներ, մանաւանդ տարբեր ստորվելու եւ ամբարելու:

«Խաչբառն լուծելու ամենէն հաճելի բաժինը այն է, որ վստահ եւր որ լուծումի պիտի հասնիք» կ'ըսէ Սթիվըն Սոնտեյմ, ամերիկացի երգահանն ու երգերու հեղինակը (1930 - 2021):

Նիւ Եորքի (ԱՄՆ) ամենէն նշանաւոր շաքարթերթին՝ The New York Times-ի խաչբառի խմբագիրը կ'ըսէ.

«Խաչբառն լուծելը կը խաղաղեցնէ մեզ, կը վերացնէ մեր տագնապը եւ մեզ կը դարձնէ աւելի հանդարտ»:

Խաչբառի սիրահարները կրնան հաստատել այս խօսքերը իրենց փորձառութեամբ:

Կ'ըսուի թէ անգլիական տարբերակը այս խաղին շատ աւելի դժուար է, քան՝ ամերիկեանը:

Խաչբառի առաջին հրատարակութենէն ետք, մոլութեան հասեր է այս խաղը այնքան, որ շապիկներ եւ հագուստներ կարելի էր գտնել այս խաղին գծանկարներով:

Նոյնիսկ այսօր, կ'ըսուի թէ բաղնիքի համար թուղթեր (թուլալէթի թուղթ) կան, որոնց վրայ խաչբառ տպուած է:

«Բաղնիքին մէջ ալ հանգիստ չկայ» պիտի ըսեր Նէնէ Հայկանոյշս:

Սկիզբի խաղերուն մէջ բառերը պարզապէս հոմանիշներ էին, աւելի ուշ սակայն անոնք բարդացան եւ դարձան ... ծածկագրեր:

1941 թուականին The Daily Telegraph թերթին խմբագիրը, երբ ընթերցողներ սկսեցին խաչբառն լուծելու իրենց արագութիւնը գեղուցել, որոշեր է մրցում մը յայտարարել, տեսնելու թէ ո՞վ կրնայ 12 վայրկեանէն խաչբառ մը լուծել:

25 անձեր, որոնք կրցած էին անցնիլ սկզբնական 12 վայրկեանը, հրաւիրուեր են խմբագրատուն, մրցելու համար. անոնցմէ մէկը տրուած խաչբառը կրցեր է լուծել 6,35 վայրկեանէն:

1941-ին Պատերազմական Գրասենեակը (կապուած Մեծն Բրիտանիոյ բանակին) մտածեր է օգտուիլ այս քանի մը անձերէն եւ գտնուած գործի լծել որպէս ծածկագիր քակողներ:

Համաշխարհային Բ. պատերազմի տարիներուն խաչբառերը օգտագործուեր են որպէս գաղտնի հաղորդակցութեան միջոցներ, եւ շրջան մը ետք՝ լոտեսական ցանց մը բացայայտուեր է, Leonard Dawe-ի գլխաւորութեամբ:

Իսկ պատերազմէն ետքի տխուր տարիներուն, երբ պարէնի հիմնական նիւթերը կտրոններով կը տրուէին, կտրոններու տեսքերուն մէջ խաչբառեր գտնուուած կ'ըլլային, որպէսզի մարդիկ գտնուէն լուծեն հերթի կանգնելու ընթացքին եւ չզգան ժամանակն ու յոգնութիւնը:

Վերջին տարիներուն ի յայտ եկաւ sudoku-ն, որ խաչբառի սկզբունքով, բայց թիւեր օգտագործող խաղ մըն է, նոյնքան տարածում գտած, որքան խաչբառը:

Երբեմն կը մտածեմ՝ ի՞նչ դիւրին ձեւեր կան հայերէնը հաճելի ձեւով ստորվեցնելու, մանաւանդ խաղի լեզու դարձնելու համար դպրոցներուն մէջ, օրինակ, փոխանակ ընթերցումի բառերը գոց սորվիլ թելադրելու, գտնուած խաչբառի մէջ դնելով եւ որպէս խաղ տալով, աշակերտները աւելի հեշտ եւ հեղասահ կերպով կը մտապահեն բառերը: Հայերէնի դասապահին վերջին տասը վայրկեաններուն կարելի է խաղալ, խաչբառն լուծել կամ բառային այլ խաղեր եւս խաղալ, նաեւ համակարգիչի վրայ:

**www.kantsasar.com**  
www.kantsasar.com

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԷՍԴՐԱՏԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ ԵԶԱԿԻ ՊԱՀԵՐ ՊԱՐԳԵՒԵՑ ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Համազգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Եսդրատային Նուագախումբը, գեղ. ղեկավարութեամբ բժիշկ Ռաֆֆի Ապեճեանի, երաժշտական իւրայատուկ ելոյթներով, ճոխ երգացանկով հրապուրեց հալէպահայութիւնը:

Հանդիսատեսը վայելեց հայ եւ օտար երգարուեստի տարբեր ժամանակաշրջաններու յատուկ ընտիր նմոյշներ, որոնք հնչեցին լարային, հարուածային եւ փողային գործիքներու տիրապետած երիտասարդ երաժիշտներու նուագակցութեամբ, մեներգողներու ինքնատիպ կատարումներով:

Յատկանշական էին նաեւ գեղ. ղեկավար բժիշկ Ռաֆֆի Ապեճեանի կատարած ձայնային բաժանումներն ու ստեղծած ներդաշնակութիւնը:

Արդարեւ, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին, կազմակերպութեամբ Համազգայինի «Ն. Աղբալեան» մասնաճիւղի վարչութեան, մասնաճիւղի Եսդրատային Նուագախումբը հանդէս տեւա երկու ելոյթներով՝ Շաբաթ, 27 եւ Կիրակի 28 Յունուար 2023-ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս:



Ելոյթներուն ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, Բերիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնորդին ներկայացուցիչը, ՀՀ Մարդասիրական խումբի գնդապետն ու խումբի անդամներ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններ, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Իշխանութեան, Յարաբերական Մարմինի, Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ եւ երաժշտասէր հանդիսականներ:



Բացման արարեքնէն խօսքով Զրիստ Փայասեան յայտնեց, որ երաժշտութիւնը ազգի մը մշակութիւն մեկնաբանն է եւ հոգեկան սնունդ կը հայթայթէ, սեր կը ներշնչէ: Երաժշտութիւնը պատմութիւնն է, որ կ'արտայայտէ ազգի մը յարթանակներն ու դժուարութիւնները: Ապա ասելցնելով ըսաւ, որ Սուրիոյ մէջ հայութիւնը կը պահպանէ իր մշակութային արժեքները միեւնոյն ատեն կը ջանայ հարստացնել սուրիական մշակութիւնը գունեղ պատկերով՝ շնորհիւ երկրի նախագահին քաջարեանի, այնուհետեւ հնչեցին «Pretty Woman»-ը, կատարողութեամբ Կարպիս Աւագեանի, Խաչատուր Աւետիսեանի «Գարնանային»-ը, մենակատարութեամբ Բիզանդ Պեպեճեանի, «Jazz Melody»-ն կատարողութեամբ Ակաբէ Ֆրանքեանի, եւ արարեքնէն «Մաութիկ» եւ «Չաիրաթ ուլ-Մատան» երգերը, կատարողութեամբ Լիւսի Յովհաննեսեանի:

Բ. բաժինով Եսդրատային Նուագախումբը ներկայացուց հետեւեալ երգերը՝ Կոմիտասի «Չուլո»-ն, կատարողութեամբ Կարպիս Աւագեանի, լիբանանցի հանրածախարանի, այնուհետեւ հնչեցին «Mas Que Nada» եւ «Արցախ» խմբային երգերը, բոլորը նուագախումբին ընկերակցութեամբ:

ջալէրանքին ու զօրակցութեան: Հայերէն բացման խօսքով Ժէրի Նաճարեան-Գասապեան նկատարողութեամբ Մարգարեանի, «Mas Que Nada» եւ «Արցախ» խմբային երգերը, բոլորը նուագախումբին ընկերակցութեամբ:



տել տուաւ որ երաժշտութիւնը համարողային լեզու է, իսկ Համազգայինի նպատակն է հայ մշակութային արժեքներուն, երգ ու երաժշտութեան շուրջ համախմբել հայ երիտասարդութիւնը: Ան յայտնեց, որ Եսդրատային Նուագախումբը, բժիշկ Ռաֆֆի Ապեճեանի գեղ. ղեկավարութեամբ յաջողեցաւ ի մի բերել երիտասարդ արուեստագետներ եւ բեմ բարձրացնել խումբը՝ հարուստ եւ գունեղ յայտագիրով:

Ա. բաժինով նուագախումբը ներկայացուց հետեւեալ երաժշտական գործերը՝ Ա. Խաչատուրեանի «Գայիանէ Պալետ»-էն քաղուածք մը, Համազգայինի «Կար Մի Աղջիկ» երգը, մենակատարութեամբ Մեղեդի Փամպուքեանի, Գուսան Շերամի «Փնջիկ-Մնջիկ»-ը, կատարողութեամբ Մարինէ



Մարգարեանի, այնուհետեւ հնչեցին «Pretty Woman»-ը, կատարողութեամբ Կարպիս Աւագեանի, Խաչատուր Աւետիսեանի «Գարնանային»-ը, մենակատարութեամբ Բիզանդ Պեպեճեանի, «Jazz Melody»-ն կատարողութեամբ Ակաբէ Ֆրանքեանի, եւ արարեքնէն «Մաութիկ» եւ «Չաիրաթ ուլ-Մատան» երգերը, կատարողութեամբ Լիւսի Յովհաննեսեանի:

Բ. բաժինով Եսդրատային Նուագախումբը ներկայացուց հետեւեալ երգերը՝ Կոմիտասի «Չուլո»-ն, կատարողութեամբ Կարպիս Աւագեանի, լիբանանցի հանրածախարանի, այնուհետեւ հնչեցին «Mas Que Nada» եւ «Արցախ» խմբային երգերը, բոլորը նուագախումբին ընկերակցութեամբ:

նօթ երգչուհի Ֆէրուզի երգերէն փունջ մը, կատարողութեամբ Լիւսի Յովհաննեսեանի, Ռաքսեթի «Lis-



ten To Your Heart»-ը, կատարողութեամբ Կարպիս Աւագեանի, Տեմիս Ռիսուսի «Far Away»-ը, մենակատարութեամբ բժիշկ Պերճ Գասապեանի, ժողովրդական երգերու



Հարան մը, կատարողութեամբ Մարինէ Մարգարեանի, «Mas Que Nada» եւ «Արցախ» խմբային երգերը, բոլորը նուագախումբին ընկերակցութեամբ:



Գեղ. ղեկավարը մենակատարներուն ընտրութիւնը երգերուն համապատասխանող տուեալներով կատարած էր, ինչպէս նաեւ ելոյթի ընթացքին առիթ ընծայած իւրաքանչիւր նուագողի առանձին բաժինով մը հանդէս գալ՝ իր իւրայատկութիւնը ներկայացնելով:

Կարճ ժամանակի մը մէջ, հակառակ երկրէն ներս տիրող կենցաղային եւ տնտեսական ծանր պայմաններուն, Համազգայինը յաջողած էր ի մի բերել արուեստի աշխարհին ծառայող խումբ մը երիտասարդներ, որոնք ամէնօրեայ փորձերով, ներդաշնակ կատարու-

մով հաճելի պահեր ստեղծեցին, հանդիսատեսը ծանօթացուցին երաժշտական տարբեր տեսակներու եւ ներդաշնակ խումբի մը միասնական աշխատանքին արդիւնքը ցոյց տուին:



Հալէպահայ հանդիսատեսը ընդհանրապէս ժլատ է իր ծափողջոյններուն մէջ, այդպէս հաւանաբար իր ծանր առօրեային հետեւանքն է: Այդուամենայնիւ ցանկալի է նման ելոյթներու հանդիսատեսին քաջալերական ծափողջոյններով խորհուսել բեմահարթակ բարձրացող ու լաւագոյնը հրամցնել ջանացող



խումբը, գէթ այս ձեւով գնահատելու անոր ճիգն ու եռանդը:

Համազգայինի «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղի վարչութիւնը ջանք չէր խնայած խումբի յաջող ելոյթներուն համար ստեղծելու բարենպաստ պայմաններ, բացայայտելու երիտասարդ տաղանդներ ու հաւաքական աշխատանքով հարստացնելու հալէպահայութեան մշակութային առօրեան:

Հանդիսատեսներուն հոծ ներկայութիւնը կ'արտացոլացներ նման խումբերու ելոյթներուն հանդէպ հալէպահայութեան ծարաւը, ուստի կը մաղթենք, որ Եսդրատային Նուագախումբն ու մեներգողները չբաւարարուին այս ելոյթներով ու հրամցնեն նոր ծրագիրներ:

Գերշ. Տէր Մակար Սրբազան Եպս. Ազգարեան ելոյթներու աւարտին իր պատգամը ուղղելով շնորհաւորեց Համազգայինի Եսդրատային Նուագախումբը եւ դիտել տուաւ, որ իւրաքանչիւր երաժշտական կտորի հետ երաժիշտները մեզ փոխադրեցին աշխարհ մը ու մասամբ մեղմացուցին երկրի պայմաններուն բերումով մեր ճնշուած առօրեան: Ապա սրբազան հայրը շնորհակալութիւն յայտնեց գեղ. ղեկավարին, երաժիշտներուն եւ Համազգայինի «Ն. Աղբալեան» մասնաճիւղի վարչութեան, նորանոր ելոյթներու բարեմադրութիւններով:

Թողակից



«ՕՐԻՆԵՍՅԻ ... ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ ԶԱՍՏԱՏԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՍ...»

90 երկար տարիներ առաջ՝ 4 Նոյեմբեր 1934-ին, Պատմական Հայաստանի սահմանակից քաղաքներ՝ Նորահաստատ Գամիշլիեն, հնչեց ձայնը Ս.Տ. Բարգեն Աթոռակից Կաթողիկոսին հետևելու խոսքը. «Օրինեսցի եւ օծեցի...», ապա «Օրինեսցի եւ պահպանեսցի եւ Նախախնամեալ պահեսցի յանուն Սրբոյն Յակոբայ հաստատեալ եկեղեցիս...»<sup>1</sup>:



Տեղահանությունն ետք, ինչպես հայերուն վիճակն էր ամենուրեք, Նոյնպես էր Գամիշլիի հայ ժողովուրդինը: Անտուն, անտիրական՝ մինչև էր Կաթողիկոսարանը եւ Առաջնորդարանը իրենց տեր կանգնեցան: Ժողովուրդը անուս էր եւ մեծամասնությամբ՝ քրտախօս: Այդ իսկ պատճառով աշխատանքի կը ձեռնարկուի եւ առաջին հերթին գամիշլիցիներ իրենց ուժերով, ըստ իրենց կարողության, տեր կը կանգնին իրենց գաւազներուն: Տուներու մէջ հայ լեզուի դասեր կը տրուին, քրտախօս հայության համար քահանայի մը դասաւորումը կ'ըլլայ Գաբրիել Բնիկ: Երեցեանի շնորհիւ (ապա Տեր Գրիգորեան), իսկ ժողովուրդի մնացեալ մասին հոգեւոր մատակարարումը կը կատարուի Աշոտ Բնիկ: Փափագեանի կողմէ:

Ընդհանուր շրջաններուն մէջ հայ ժողովուրդը սրահներ կը կառուցանէ եւ այդ սրահները կ'օգտագործէ որպէս հոգեւոր եւ մտաւոր գիտութեանց մատակարարման կեդրոններ: Սուրբահայ Օգնութեան Խաչի եւ ՀՄԸՄ-ի օգնությամբ գոհացում կը տրուի աշակերտներուն, հայ ընտանիքներուն եւ ուսուցիչներուն:

Երջանկայիշատակ Բարգեն Ա. Աթոռակից Կաթողիկոսի Դեպի Ճեզիրէի շրջան հովուապետական անդրանիկ այցը տեղի կ'ունենայ 1934-ին: Վեհափառ Հայրապետը 24 Հոկտեմբերէն մինչև 12 Նոյեմբեր կ'այցելէ Պապ, Մումպուճ, Ճարապուս, Արաբ-բունար, Այն-Արուս, Թէլ-Ապիատ, Թիւս, Ռաքքա, Թէլ-Սիման, Խըրպըթ-Ռըզ, Ռաս ուլ-Այն, Տրպէսիէ, Ամուտ, Գամիշլի, Գուպուր-Պիթ, Վանիկ, Տերիք, Այն Տիվար, դարձեալ Գամիշլի, Թէլ

Պրաք, Հասիչէ եւ Տեր Չօր<sup>2</sup>: Ընդհանուր Փոխանորդութիւնը պաշտօնապես կը հաստատուի 1941 թուականին: Մինչ այդ՝ 1931-էն մինչև 1942, առաջնորդական փոխանորդութեան պաշտօնը կը կատարէ Աշոտ Բնիկ: Փափագեան: 1934-էն<sup>3</sup> սկսեալ Հայկաի Առաջնորդարանը աշխատանք կը տանի եւ շրջանի կաթողիկոսներէն եւ տեղապահներէն ճեզիրէի շրջանին համար վեղա-

րաւոր մը կը խնդրէ: Ի պատասխան այս խնդրանքին, Ս. Աթոռիկ Միաբանական Ընդհանուր ժողովը 4 Սեպտեմբեր 1941-ի Նիստին, սկզբունքով կ'ընդունի վեղարաւոր մը ղրկել ճեզիրէ<sup>4</sup>: Նիստի տեղեկագրին մէջ կ'արձանագրուի. «Նկատելով որ ներկայիս հարկ կը տեսնուի հին թեմերը բարեփոխելու եւ Նոր թեմեր կազմելու, ինչպէս ճեզիրէի, Չահիլի, Պէքայի եւ Լաթաքիա Թեմայ շրջանները, յետ խորհրդակցութեան, ժողովս որոշեց սոյն խնդիրը Տեղապահ Սրբազանին մասնաւոր ուշադրութեան եւ հոգածութեան յանձնել, խնդրելով որ այժմէն ձեռնարկէ գործին Նախապատրաստութեան ու տեղեկագրէ յառաջիկային գումարուելիք (Նոյմ. 16) Ազգային Ընդհանուր ժողովին: Սակայն նկատուի ունենալով ճեզիրէի հոծ հայութեան անմիջական կարիքները եւ Հայկաի Առաջնորդարանի տարիներէ ի վեր կատարած դիմումները, սոյն խնդրին համար, ժողովս սկզբունքով ընդունեցաւ վեղարաւոր մը ղրկել հոն՝ իբրեւ Առաջն. Փոխանորդ՝ մինչև ցնոր տնօրինութիւն»<sup>5</sup>:

Միաբանական Ընդհանուր ժողովի որոշումէն ետք, Տնօրէն ժողովը 15 Հոկտեմբեր 1941-ին յարմարագոյն միաբանը կը նկատէ Խորեն Վարդապետը: Իսկ Հայկաի Խառն ժողովի ընտրութեամբ, 2 Փետրուար 1942-ին, որպէս Սուրբոյ հիւսիսային շրջանի՝ ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ կ'ընտրուի դարձեալ Խորեն Վարդապետը եւ այսպիսով հայր սուրբը կը մեկնի Գամիշլի, ուր կը գտնուէր 35.000 հայ բնակիչ:

Հայր Խորենը 14 Մարտ 1942-ին<sup>6</sup> կը հասնի Գամիշլի եւ ճեզիրէ, անմիջապէս աշխատանքի սկսելով 11

Ապրիլ 1943-ին<sup>7</sup> կը կառուցանէ Առաջնորդարանը եւ հինգ սենեակնոց մանկապարտէզը:

90 տարիներ անցան եւ տակաւին Գամիշլիի ժողովուրդը իր երթը կը շարունակէ՝ իր եկեղեցւոյ հանդէպ՝ Նոյն երկիւղածությամբ: 90 տարի, որուն ընթացքին իւրաքանչիւր տարի իր արժէքը ունի՝ լիառատ աշխատանքով: Արիւսապատ, խեղճուկրակ, սակայն աստուածային գործությամբ լեցուն եկեղեցիէն, մինչև շքեղ, քառապատ տաճարի վերածուիլը: Զրտախօս ժողովուրդէն մինչև հայախօս ժողովուրդի վերածուիլը: 90 տարի՝ դժուարութեամբ եւ խոչընդոտներով լեցուն, սակայն անկուն կամքով եւ Յարուցեալ Զրիստոսի օրինակով յարութիւն առած եւ առաջ գացած իբրեւ հայ քրիստոնէայ ժողովուրդ:

Այսօր հին սերունդէն եկած Նոր

սերունդս, մեր յաջողութիւնները որպէս 90-ամեայ աշխատանքներու ընծայ, կու գանք դնելու մեր Աստուծոյն առջեւ՝ մեր Նախնիներուն փոխարէն:

90 տարի ետք կու գանք ըսելու. «Շնորհակալ ենք, ո՛ր վեր երանելի Նախորդներ, որ ձեր ճակտի քրտինքով հիմնեցիք այս շրջանը, ձեր աշխատանքի քրտինքը հողին հետ շաղախուելով աճեցուց մեզ, ձեր ձեռքերով կատարած աշխատանքը պարարտացուցիչ դարձաւ եւ ահա այսօր ձեր ցանած ծառէն քաղցր պտուղ կը ճաշակենք:

Օրինեալ ըլլայ ձեր յիշատակը եւ օրինեալ ըլլայ Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցին իր ժողովուրդով:

Աղօթարար  
Լեւոն Վրդ. Եղիայեան  
Առաջնորդական Փոխանորդ  
Ճեզիրէի Հայոց

<sup>1</sup>Թեմական այցելութիւն, Հոգեւոր մխիթարութիւն, Հասկ, Անթիլիաս, Դեկտեմբեր 1934, էջ 103:  
<sup>2</sup>Նոյն անդ, էջ 101-110:  
<sup>3</sup>Ճեզիրէի Փոխանորդութիւնը, Հասկ, Անթիլիաս, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1947, էջ 297:  
<sup>4</sup>Տ. Խորեն Վրդ. Բարոյեան Առաջնորդական Փոխանորդ Ճեզիրէի Հայոց, Հասկ, Անթիլիաս, Մարտ-Ապրիլ 1942, էջ 64:  
<sup>5</sup>Թեմերու Կազմակերպութիւն, Հասկ, Անթիլիաս, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1941, էջ 150:  
<sup>6</sup>Չօհրապեան, Կիրեղ Եպս., Յուշեր, Ս. Ղազար-Վենետիկ, 2007, էջ 220:  
<sup>7</sup>ԿՅՄՍԿԱ, հ. 3, գ. 1, գ. 85, թ. 17, բնագիր, ձեռագիր, թուահամար 214, թուակիր 13 Ապրիլ 1943:

ԱՐՃԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ...

Սկիզբ՝ էջ 3

րոպացիները՝ Յանուն Արցախի» հարթակի կողմէն կազմակերպուած հերթական Նախաձեռնութիւնը միաւորած է Եւրոպայի մէջ ապրող մեր այն հայրենակիցները, որոնց համար Արցախը տարիներ ի վեր եղած է ոգեշնչման աղբիւր, հարիւրաւոր կազմակերպութիւններու, որոնք տարիներ շարունակ աշխատած են Արցախի միջազգային հեղինակութիւնը բարձր պահելու եւ տեսանելի դարձնելու ուղղութեամբ:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւնները, արտայայտելով ծանր ու բարդ իրավիճակին մէջ յայտնուած արցախահայութեան տրամադրութիւնները, բռնատեղահանուած ժողովուրդին անունով երախտագիտութիւն յայտնած են այն հոգատարութեան եւ աջակցելու պատրաստակամութեան համար, որ ցուցաբերած են հարիւրաւոր եւրոպական կազմակերպութիւններ՝ Արցախին օժանդակելու Նախապահի շուրջ օրակարգ ձեւաւորելու մեծածաւալ աշխատանքի միջոցով:

Մենք շնորհակալ ենք Նաեւ եւրոպացի մեր բոլոր բարեկամներուն, որոնք տեսականօրէն պաշտպանած են Արցախի ժողովուրդի ինք-

նորոշման եւ ինքնիշխան պետութիւն կառուցելու մեր իրաւունքը:

Մեծ եռանդով կը միանանք արդարացիօրէն ցանկազրուած այն յորդորներուն ու պահանջներուն, որոնք ուղղուած են ձեր Նստավայր երկիրներու կառավարութիւններուն ու համաեւրոպական ղեկավար կառոյցներուն:

Խորապէս համոզուած ենք, որ համազգային համախմբումը եւ անոր սահմաններու ընդլայնումը, Հայրենիքին մէջ պահանջուած ու սպասուող աշխատանքի իրականացման հետ մեկտեղ կրնան ստեղծել այն Նախադրեալները, որոնք անհրաժեշտ են մեր գլխաւոր հարցին՝ անվտանգութեան միջազգային երաշխիքներով Արցախի ժողովուրդի հաւաքական վերադարձը իրականացնելու համար:

Յաջողութիւն կը մաղթենք բոլորիս՝ պատմական այդ առաքելութեան իրականացման ճանապարհին:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւններ՝  
«Ազատ Հայրենիք-ԸՄԴ»,  
«Հայ Յեղափոխական Դաշակցութիւն»,  
Արցախի «Արդարութիւն»,  
«Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւն»  
27 Յունուար 2024

## ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

**Խոյ**  
Ձեր սիրելիներուն նկատմամբ բարեացակամութիւն ցուցաբերեցէ՛ք: Ժամանակն է, որ դուք ձեզ արժեւորէք: Համեստութիւնը առաքիւնութիւնն է:

**Ցուլ**  
Ձեր նուիրումները գովասանքի պիտի արժանանայ: Մարդիկ վստահութեամբ պիտի դիմեն ձեզի՝ օգնութիւն հայցելու համար: Հպարտացէ՛ք:

**Երկուորեակ**  
Սիրելիներու հետ հաճելի ժամանց մը պիտի ունենայք: Գործի նոր առաջարկ մը պիտի ստանայք, որ պիտի բարելաւէ ձեր նիւթական վիճակը:

**Խեցգետին**  
Ձեր շուրջիներուն նկատմամբ համբերատար եղէ՛ք: Բարկացկոտ մի՛ ըլլաք, որպէսզի հարցեր չծագին: Մանր-մունր վեճերուն աչք խփեցէ՛ք:

**Առիծ**  
Անկեղծ բարեկամ մը նիւթական աջակցութիւն պիտի ստանայք: Ձեր առողջութեան հոգ պետք է տանիք, որպէսզի խնդիրներ չյառաջանան:

**Կոյս**  
Նախանձելի եք: Վերջապէս պիտի կարենաք հասնիլ ձեր իտեալին: Բարեկամներուն յարգանքը պիտի վայելէք եւ հպարտանաք:

**Կշիռք**  
Ձեր ընտանեկան կեանքը կայուն վիճակ մը պիտի ունենայ: Ձեր թափած ջանքերուն շնորհիւ պատիւ պիտի վայելէք:

**Կարիճ**  
Ձեր համոզումներուն շնորհիւ բարձունքներ պիտի նուաճէք: Մօտ առնեն ձեր իղծերը պիտի իրականանան եւ դուք բաւարարութիւն գգաք:

**Աղեղնաւոր**  
Նիւթական պարգեւ մը մեծապէս պիտի երջանակացնէ ձեզ: Հին ընկերոջ մը այցելութիւնը պիտի ընդունիք եւ երջանկութեամբ ողորդիք:

**Այծեղջիւր**  
Ձեր շուրջիներուն հիացումին պիտի արժանանաք: Բարեյաջող ծրագիրներ պիտի իրականացնէք ու բարձունքներ նուաճէք:

**Ձրիս**  
Անակնկալ այցելու մը ուրախ լուր մը պիտի բերէ ձեզի: Երկար ճամբորդութիւն մը նախատեսած էք եւ շուտով պիտի կատարէք զայն:

**Ձուկ**  
Անհրաժեշտ է, որ լրջութեամբ մօտենաք հարցերուն եւ զգուշութեամբ աշխատիք՝ յաջողութեան հասնելու համար: Պարտաճանաչ եղէ՛ք:



## ՀԻՐԸՆԿԱԼՄԱՆ ԱՌՆՁՈՒՂ ԿԵՆՏՐԱԿԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Շատեր կենցաղավարական կանոնները կարելի է չհամարեր, սակայն երբեմն, որպէս իրաւիրեալ, անտեղեակ ըլլալով, գործիական, սեղանի շուրջ նստելու կենցաղավարական տարրական կանոններուն, անյարմար կացութիւններու մէջ կրնաք յայտնուիլ: Ուստի հարկ է իմանալ գէթ քանի մը հիմնական կանոն այս առումով:

### Հրաւիրեալներու Դիմաւորում

-Եթէ մարդիկ ձեզ իրենց տուն իրաւիրեն, հարկ է ներկայանալ ճիշդ ժամուն, կամ ժամադրութենէն 10-15 վայրկեան առաջ: Ուշացումը, ընդհանրապէս, կը համարուի անքաղաքավար արարք: Տեսաբար ուշացող մարդը ժամանակի ընթացքին կը կորսնցնէ իր շրջապատին յարգանքը:

-Հիւր ընդունողները հիւրերուն կը սպասեն 15 վայրկեան:

-Սովորաբար տանտէրները կ'ընդունին հիւրերը եւ կ'օգնեն, որ անոնք հանեն իրենց վերարկուները, ապա գիրենք կը իրաւիրեն հիւրասենեակ:

-Եթէ ուշացած էք, տանտիրոջ բարեւելէ ետք ներողութիւն խնդրեցէ՛ք ձեր ուշացումին համար:

### Ճաշի Սեղանին Շուրջ

Եթէ ճաշի իրաւիրուիք, յարգեցէ՛ք հետեւեալ օրէնքները:

-Սեղանին մօտեցէ՛ք տանտիրոջ իրաւիրելէ ետք: Սեղանին շուրջ նախ կանայք, ապա տղամարդիկ կը նստին:

-Տղամարդիկ ճաշի սեղանին մօտենալով նախ պետք է կանանց աթոռը ետեւ առնեն եւ օգնեն, որ անոնք տեղաւորուին:



-Հիւրերը տեղաւորելու ընթացքին տանտիրոջը հարկ է որ նախօրոք ճշդաբար ըլլայ իւրաքանչիւրին տեղը, երեցները նախընտրելի է ուղղել սեղանին գլուխը:

-Տանտիրոջը սովորաբար կը նստի այնպիսի տեղ մը, ուրկէ կարելի ըլլայ ի հարկին խոհանոց ուղղուիլը, իսկ տանտէրը կը նստի անոր դիմացը՝ սեղանին միւս կողմը:

-Ընդունուած է տօնական սեղանի շուրջ նստեցնել նաեւ մանուկները, սակայն անոնք պետք է հետեւին որոշ կանոններու: Հետեւաբար լաւ կ'ըլլայ թելադրել անոնց, որ առաջին անգամ չվերցնեն

իրենց ուտելիքը եւ բացատրել կենցաղավարական որոշ կանոններ, ինչպէս օրինակ ծամել կամ հեղուկը խմել առանց բերնին ձայնը լսելի դարձնելու, դանակն ու պատառաքաղը ճիշդ ձեւով օգտագործել եւ այլն:

-Սեղանին շուրջ տանտէրը պետք է ստեղծէ դրական մթնոլորտ:

-Տանտիրոջը պետք է յաճախակիօրէն խոհանոց ուղղուի:

-Հիւրասիրութիւնը, ինչպէս նաեւ սեղանը, նախօրոք պատրաստ պետք է ըլլան: Այս աշխատանքը նախընտրելի է յետաձգել:

-Հիւրերու ներկայութեան թելադրելի է հեռաձայն չօգտագործել:

-Տանտէրները հիւրերէն իւրաքանչիւրը առանձնապատուկ ուշադրութեան պետք է արժանացնեն: Եթէ տհաճ վիճակ ստեղծուի պիտի հարթեն եւ բարենպաստ մթնոլորտ ստեղծեն:

-Տանտէրը պետք է ճաշը առաջին անգամ ըլլայ:

-Սեղանին շուրջ պետք է շիտակ նստիլ, աչ կամ ձախ չթեքիլ:

-Արմուկները պետք է սեղանին վրայ պահել, որպէսզի կողքը նստողները չխանգարուին:

-Թաշկինակները պետք է դնել ծունկին վրայ, իսկ բերանը սրբելու պարագային թաշկինակը նրբօրէն ոլորել ցուցամատին շուրջ եւ բերնին անկիւնները սրբել:

-Ձեռքերը եւ բերանը կարելի է սրբել նաեւ սեղանին վրայ տեղադրուած թուղթ թաշկինակներով, իսկ մանուկներուն թաշկինակները նախընտրելի է կախել իրենց օձիքէն:

-Ուտելէ ետք թաշկինակը պետք է դնել սեղանին վրայ:

- Եթէ դանակը կամ պատառաքաղը գետին իյնան, վերցնելով մի՛ օգտագործէք զանոնք, այլ նորերը խնդրեցէ՛ք:

-Ուտելու ընթացքին դանակը պահեցէ՛ք աչ ձեռքին մէջ, իսկ պատառաքաղը՝ ձախին:

-Մի՛ փչէք շատ տաք ապուրիկ կամ ըմպելիքին վրայ՝ զանոնք պահեցնելու համար: Ուտելու ընթացքին ձայն մի՛ հանէք: Ընդհանուր պակաս նախ մի՛ վերցնէք ամենալաւ կտորը, այլ՝ ձեզի ամենամօտը:

-Եթէ ժամանակաւորապէս դադարիք ուտելէ, դանակն ու պատառաքաղը դրէք այնպէս, ինչպէս բռնած էիք: Եթէ դանակն ու պատառաքաղը իրարու զուգահեռ դնէք, այս մէկը կը նշանակէ որ դուք ճաշը ւարտած էք, հետեւաբար կրնան ձեր պակասը վերցնել:

-Սեղանին շուրջ ծխելը տհաճ երեւոյթ է:

-Նախքան սեղանէն ելլելը, անպայման տանտիրոջը շնորհակալութիւն յայտնեցէ՛ք՝ համեղ հիւրասիրութեան եւ հաճելի ժամերուն համար:

## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԻՆՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

-Սուրիոյ պասքեթի տղոց Բ. դասակարգի փոխադրման մրցումներուն, ՅԱԸՄ-ի տղաքը շարունակելով իրենց յաղթական երթը յաջողեցան արձանագրել հերթական 6-րդ յաղթանակը պարտութեան մատնելով ՅԵԸ-ը՝ 58 - 69 արդիւնքով: ՅԱԸՄ գրաւեց աղիսակի առաջին դիրքը, որուն շնորհիւ յաջորդ փուլին ան մրցակից պիտի ունենայ հարաւային շրջանի 4-րդ դիրքը գրաւող Ճարամասան:




-Ասիոյ փոխադրման մրցումներու շրջագիծին մէջ, Սուրիոյ ֆութպոլի հաւաքակալը 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Յնդկաստանը եւ փոխանցուեցաւ յաջորդ փուլ: Սուրիոյ միակ կողմը Նշանակեց Օմար Խրեյպին: Աւելցնելը, որ պատմութեան մէջ ասիկա առաջին անգամն է, որ Սուրիոյ հաւաքակալը կը յաջողի փոխանցուիլ երկրորդ փուլ:

-Սուրիոյ պասքեթի փոխադրման Ա. դասակարգի մրցումներուն, Յալէպի Ահլին 79 - 75 արդիւնքով Յոմսի մէջ պարտութեան մատնուեցաւ հիւրընկալ Զարամէն, իսկ Յուրիէն 97 - 72 արդիւնքով գիշեցաւ Ճէյշին: Այս փուլին Յալէպի խումբերէն ճալաաը միակն էր, որ կրցաւ յաղթանակ արձանագրել, պարտութեան մատնելով Ուասպէն:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### 30 ՅՈՒՆԻՍԻՆ ԶԱԻ ՊԻՏԻ ԲԵՌԱՆԱՅ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԵՆ

Սպանիոյ փոխտան Դարսելոնայի գլխաւոր մարզիչ Զաի յայտարարեց, որ ամբան, Յունիսի աւարտին, պիտի հեռանայ իր պաշտօնէն: Այս յայտարարութիւնը փոխանցեց



Mundo Deportivo-ն: «30 Յունիսին կը հեռանամ ակումբէն: Այս որոշումը քննարկած եմք ակումբի նախագահին եւ կառավարման խորհուրդին հետ: Դարսելոնան ուղղութեան փոփոխութեան կարիք ունի: Այս որոշումը կապուած չէ տնտեսական վիճակի հետ: Այս որոշումը սրտանց գոյացուցի: Կը կարծեմ որ այս լաւագոյն որոշումն է ակումբին յաջողութեան համար», ըսաւ Զաի: Սպանիոյ առաջնութեան 22-րդ փուլի մրցումներուն, Դարսելոնան իր դաշտին վրայ պարտութեան մատնուեցաւ Վիլա Ռիալէն՝ 5 - 3 արդիւնքով: Ան 44 կէտով ներկայիս կը գրաւէ աղիսակի 3-րդ դիրքը:

#### ՉԻՏԱՆ ԿԸ ՓԱՓԱՔԻ ԳԼԽԱՌԻԵԼ ՖՐԱՆՍԱՅԻ ԶԱՄԱԿԱՆԸ

Ռեալ Մատրիտի նախկին գլխաւոր մարզիչ Չենատտին Չիտան մտադիր է աշխատանքի անցնիլ Ֆրանսայի հաւաքակալներէն: Այս մասին յայտարարութիւններ կատարեց RMC Sport-ը:

Աղբիւրի փոխանցմամբ՝ Չիտան պատրաստ է սպասել մինչեւ պաշտօնին աւարտը Ֆրանսայի հաւաքակալի մարզիչին, որ ներկայիս կը զբաղեցնէ Տիտէ Տիշամպը: Ան իր ծրագիրին մէջ ունի նաեւ Մարսելի կազմի մարզումը:



#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 473)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

#### Յորիզոնական

- 1- Կործանում: Աչքի աղտ:
- 2- Յակառակ՝ ուսի վրայ դրուող եկեղեցական կերպաս: Յակառակ տարածքի միաւոր:
- 3- Յակառակ՝ իսօք: Յակառակ՝ տառի մը անունը: Իշխանութեան գաւազան:
- 4- Տառի մը անունը: Խառնատառ՝ Ս. Պատարագի բաժակ: Կծծի:
- 5- Ս. Կոյս Մարիամի մայրը:
- 6- Կրկնուած ձայնաւորներ: Յակառակ՝ 5050: Մասնիկ:
- 7- Գրաբար՝ օր: Երկբարբառ: Տառի մը անունը:
- 8- Սիրով գործ մը կատարող:
- 9- Դրամանիշ մը: Շրջագիծ: Տառի մը հարեւանները:
- 10- Աչք: Յակառակ՝ ռումբի տեսակ: Անասունի մորթ պարկ:
- 11- Ամենէն առաջ: Իգական անուն: Լաւ, աղէկ:
- 12- Արական անուն: Բարձ:

#### Ուղղահայեաց

- 1- Վեց լարով հին նուագարան: Իգական անուն:
- 2- Կրկնուած ձայնաւորներ: Անկարող:
- 3- Ճնողագ ուրկ: Կողոպուտ: Յակառակ՝ 4040:
- 4- 7001: Արամ Խաչատուրեանի պալետներէն:
- 5- Վերտ: Յակառակ՝ գոյութիւն ունէր:
- 6- Գետեզորի վրայ կախուող ճիւղերով ծառ: Միաք Մեծարեւոյցի երկերէն:
- 7- Յակառակ՝ շողկապ: Կահ: Յակառակ՝ ձայնանիշ:
- 8- Յակառակ՝ դաշտ:
- 9- Յակառակ՝ կշիռքի թաթ: Ձայնանիշ: Յակառակ՝ իրերայաջորդ տառեր:
- 10- Բանջարեղէնի տեսակ մը: Գագաթ:
- 11- Կրկնուած ձայնաւորներ: Անձնական յուշերու առօրեայ տետր:
- 12- Խոժոռ: Ծեփի համար գործածուող գաճաքար:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 472)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ի	ն	դ	բ	ա	ր	ե	կ	ա	մ	
2	ա	ր	ե	գ	ն	կ	ա	ա		ւ	ա	
3	տ	ա	ր	ա		ն	ն		ե	տ		
4	ր	ի	լ	ն	ւ	ե	ն	տ	ր	ա		
5	ն	յ	ա		ա	փ	մ	ր	հ	ն	դ	
6	ւ	կ	ր	ե	լ	ն	ե	ն				
7	ճ		ա	ւ	ե	ր	կ		ր			
8	ա	կ	ն	թ	ա	ր	թ	ա	ն	ն	ա	
9	կ	ն	մ	ա		ե	լ	ն				
10		ւ		կ	ա	ր	ա	լ	ե	տ	ր	
11	ա	ր	ա	տ	ր		լ	ա	տ	ա		
12	հ	ն	ա	ր	ա	մ	ի	տ	ր			

ԼՈՒՐԻՆՍ

#### Երկուշաբթի

5/2



5° 13°

#### Երեքշաբթի

6/2



6° 16°

#### Չորեքշաբթի

7/2



7° 17°

#### Հինգշաբթի

8/2



6° 17°

#### Ուրբաթ

9/2



5° 17°

#### Շաբաթ

10/2



6° 17°

#### Կիրակի

11/2



5° 16°

## ՀՈԳԵՆԱԳՍԵՆ...

Մկրտչի Էջ 1

Սրբազան հոր հայրական պատգամին բնաբանն էր օրուան անտարանական հատուածը (Յհ 6.22-38), որուն ընդմէջէն կը հրաւիրուինք մօտենալու Զրիստոսին՝ կեանքի հացին, եւ հոգեւոր կեանքի աստիճաններէն վեր բարձրանալու:

Սրբազան հայրը պատուիրեց, որ հոգեպէս պատրաստուած ներկայանաք Ս. Սեղանին, որպէսզի Ս. Հաղորդութեան ճամբով Զրիստոս որպէս կենդանի հաց եւ գինի ներգործէ մեր սրտերուն մէջ, միաւորուի մեզի հետ, զօրացնէ մեզ, եւ մենք արժեւորելով մեր կեանքը, գայն ի սպաս դնենք հայրենիքին, ազգին, եկեղեցւոյ եւ մեր ընկերութեան բարօրութեան:

Սրբազան հայրը աղօթեց, որ Ամենակալը խաղաղութիւն պարգեւէ ննջեցեալներու հոգիներուն եւ Ս. Հոգւոյն միութեամբ ինքն ինքն սգաւորներուն, որպէսզի ննջեցեալներուն հետ կապը պահելով շարունակենք մեր կեանքի պայքարը մղել:



Յաւարտ Սուրբ եւ Ամահ Պատարագին, առաջնորդ սրբազան հոր նախագահութեամբ Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի նախկին Առաջնորդ հոգեւոր Ս. Սու-



րէն Արք. Գաթարոյեանի վախճանման քառասունքին առիթով, ներկայութեամբ՝ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդի ներկայացուցիչ Արք. Ս. Կոմիտաս Ա. Զիւլ. Տատաղլեանի, Սուրիոյ Հայ Անտարանական Համայնքի Համայնքապետի ներկայացուցիչ պատուելի Սերոբ Տէր Սահակեանի, ՀՀ Հալէպի Գըլխաւոր Հիւպատոսութեան խորհրդակցական-հիւպատոս մեծարգոյ Բարգէն Պատալեանի, Հիւպատոսութեան խորհրդակցական Դաւիթ Թաղէսեանի, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան խումբի հրամանատար գեղարար Արկատի Տօնոյեանի, Մարդասիրական Առաքելութեան 14-րդ խումբի հրամանատարին, Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխաններ Ժիրայր Ռիստեանի եւ իրա-

ւաբան Լիւսի Իսկէնեանի, Յարաբերական մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեանի, Ազգային երեսփոխանական Ժողովի անդամ Հայկազ Ասատուրեանի, Ազգային վարչութեան ատենապետ Սունայուլ Սունայուլեանի եւ վարչութեան անդամներուն, ազգային կրօնական



Ժողովի անդամներուն, հալէպահայ կազմակերպութիւններու, բարեսիրական, մարզական, մշակութային եւ երիտասարդական միութիւններու, եկեղեցական եւ ազգային մարմիններու եւ կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներու եւ ժողովուրդի գաւակներուն:

«Հոգւոցն Հանգուցելոց» աղօթքը արտասանելով սրբազան հայրը հայցեց, որ Ամենակալը Բերիոյ Հայոց Թեմի նախկին Առաջնորդ հոգեւոր Ս. Սուրէն Արք. Գաթարոյեանի հոգին եւ բոլոր նընջեցեալներու հոգիները խաղաղութեան մէջ պահէ եւ Երկինքի Արքայութեան արժանացնէ:

Այն ու հ ե տ եւ , ներկաները ուղղութեան դէպի Ա. Մատուկեան Ժ. Տան «Լեւոն Ծանթ» սրահ, ուր առաջնորդ սրբազան հայրը եւ Ազգային իշխանութիւնը ցաւակցութիւն ընդունեցին հոգեւոր Ս. Սուրէն Արք. Գաթարոյեանի վախճանման քառասունքին առիթով:

Ներկաները պատանդ վրայ հետեւեցան հոգեւոր սրբազան հոր թեմակալ Առաջնորդութեան 27 տարիներու ծառայութենէն քաղուած փունջ մը լուսանկարներու ցուցադրութեան:

Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ, գրող, Համագազայինի Հայագիտական Հիմնարկի դասախօս դոկտ. Հոլի Ազեգեան խօսք անելով ամփոփ կերպով անդրադարձաւ Բերիոյ Հայոց Թեմի Գաւազանագիրքին 60-րդ տեղը գրուած նախկին Առաջնորդ հոգեւոր Ս. Սուրէն Արք. Գաթարոյեանի 27 տարիներու անսակարկ ծառայութեան:

Ան ըսաւ. «*«Ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար»* նշանաբանը իր հոգեւորականի կեանքին ու հոգեւոր ծառայութեան ուղեգիծ

ընտրած այս անձնորի եկեղեցականը, գարմանալի ներդաշնակութեամբ յաջողեցաւ նոյնացնել իր անձն ու առաքելութիւնը, ամբողջական գիտակցութեամբ ընդունիլ կոչումին երբեմն յուսադրիչ, բայց յաճախ սպառնիչ պարտաւորութիւնները հաւատարմապէս, եւ ինքնաբաշ-



խումբի պերճագեղ օրինակով մը նոր գոյն ու դիմագիծ տուաւ Բերիոյ Հայոց պատմական Թեմին, երբ համայնքի կեանքին այլաբնոյթ բնագաւառներուն վերածաղկումի, ինչու չէ վերագաղթածքի նորագոյն



պատումները արձանագրուեցան իր պաշտօնակարութեան շրջանին»:

Դոկտ. Հոլիին յիշեց, որ 2002-ին ազգային իշխանութեան կողմէ Հալէպի մէջ մեծ շուքով իշխատակուեցաւ հոգեւոր սրբազան հոր քահանայական ձեռնադրութեան քառասունամեակն ու թեմի Առաջնորդութեան քսան հինգ ամեակը, բարձր ներկայութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին:

Ան յայտնեց, որ Հալէպի գաւազ Ս. Սուրէն Արք. Գաթարոյեան ճանչցուեցաւ որպէս հաւատարմ եւ անախապահ հոգեւորական, հոգեւոր եւ ազգային հովիւ, յարաբերութեան մարդ եւ շինարար առաջնորդ:

Աւարտին, սրբազան հայրը իր սրտի խօսքը փոխանցելով, նախ փառք ու գոհութիւն յայտնեց Աստուծոյ՝ Իր տուած շնորհքին, բարիքին եւ օրհնութեան համար, ապա շնորհակալութիւն յայտնեց դոկտ. Հոլիին, որ իր խօսքին ընդմէջէն մեր յիշողութեան մէջ թարմացուց հոգեւոր սրբազան հոր իշխատակը, անդրադառնալով անոր նուիրական կեանքին, որ որպէս անուշահոտ ընծայ նուիրուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի գոհաստեղանին վրայ:

Սրբազան հայրը անդրադառնալով հոգեւոր սրբազան հոր առաջնորդական տարիներու ծառայութեան, յայտնեց, թէ իր կեանքը յատկանշուեցաւ ամբողջական

գոհողութեամբ, նուիրումով եւ գիտակցութեամբ: Հոգեւոր սրբազանը ծրագրաւորուած աշխատանքի հաւատացող անձ էր եւ իր սիրտը կը տրուէր հայրենիքի սիրով՝ Հայաստանով, Արցախով, եկեղեցական, կրօնական, ազգային եւ մշակութային արժեքներով, այնպէս ինչպէս Վեհափառ Հայրապետը դպրեւանքի առաքելութեան մասին կը յիշեցնէ ըսելով, որ դպրեւանքը Գլխագիր մարդն է որ կը պատրաստէ: Հոգեւոր սրբազան հոր մէջ այդ մարդն էր, որ կը շնչէր, կը գործէր, կը ստեղծագործէր, կը տագնապէր եւ կը մտածէր: Ան հետեւորդը հանդիսացաւ իր հաւատքի հիմնադիրին՝ Զրիստոսին եւ մեր սրբազան հայրերուն, նահատակներուն, մարտիրոսներուն, ըլլան անոնք եկեղեցականներ թէ աշխարհականներ: Իր մէջ խորունկ կերպով արմատացած էր եկեղեցական եւ ազգային դաստիարակութիւնը եւ ըմբռնումը, որ մէկ եւրթիւն կազմած զինք առաջնորդեց ամբողջ իր կեանքի ընթացքին:

Սրբազան հայրը հաստատեց, թէ հոգեւոր սրբազանը իսկապէս արժեւորեց իր կեանքը եւ ապրեցաւ ժողովուրդին, թեմին, գաղութին, հայրենիքին, իրմէ վեր եւ բարձր ար-



ժեքներու համար եւ այդ պատճառով այսօր մենք համախմբուած ենք իր պայծառ յիշատակը անթառամ պահելու մեր հաւաքական յիշողութեան մէջ:

Սրբազան հայրը, ազգային իշխանութեան անունով երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք ընդառաջելով ներկայ գտնուեցան արարողութեան եւ մեզի աղօթակից դարձան:

Սրբազան հայրը աղօթեց հոգեւոր սրբազան հոր եւ բոլոր ննջեցեալներուն համար, խնդրելով, որ Աստուած մարդկային իրենց տկարութիւնները նկատի չառնէ, իրենց հաւատքը գործնականօրէն թարգմանած երեւոյթին դիմաց յաւիտենականութեան մէջ հազարապատիկով վարձատրէ գիրենք, մեզի ալ համեստութիւն, խոնարհութիւն եւ գիտակցութիւն շնորհէ, որպէսզի իրենց կեանքի օրհնակով մեր ներդրումը բերենք մեր շրջապատին մէջ:

Սրբազան հայրը հայոց բանակի կազմաւորման 32-րդ ամեակին առիթով աղօթեց, որ Աստուած հաստատուն պահէ մեր բանակի զինուորները, հրամանատարներն ու սպաները եւ իմաստութիւն ու զօրութիւն պարգեւէ անոնց, որպէսզի կարենան հայրենիքի պաշտպանութիւնը եւ ժողովուրդի պահպանութիւնը ի կատար ածել:

Մարինա Չիլմբոջեան-Պողիկեան